

ԱՐԱ ԵՐՆՋԱԿՅԱՆ

ԱԼՔԻՄԻԿՈՍ

Չեքիաթ մեծահասակների համար

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՉԵՔԻԱԹԱՍԱՑ

ԹԱԳԱՎՈՐ

ԹԱԳԱՎՈՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՆԵ

ԱԼՔԻՄԻԿՈՍ

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ

2-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ

4-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ

ՆԱԽԱԲԱՆ

Ալքիմիկոսի լաբորատորիան:

Ամենուր սրվակներ են, կոլբաներ: Պատերին՝ գծագրեր, սխեմաներ:

Ամեն ինչ եռում է, քլթքլթում,

անհաշիվ ճեղքերից գոլորշի ու ծուխ է տարածվում:

Ներս է մտնում Չեքիաթասացը, սեղանից վերցնում է գիրքը, կարդում է:

ՉԵՔԻԱԹԱՍԱՑ – «...Որպես անկասելի սկզբունք պիտի ընդունել, որ ապացույցով չհաստատված ենթադրությունն ընդամենը սովորական հաստատում է, ինչը կարող է լինել և՛ ճշմարիտ, և՛ կեղծ: Ու միայն երբ տրվում է ճշգրիտ ապացույցը, կարող ես ասել. «Քո ապացույցը ճիշտ է»: *(Աղմուկով փակում է գիրքը, դնում սեղանին):*

Բարի երեկո: Թույլ տվեք ներկայանալ. ես Չեքիաթասացն եմ:

Բնականաբար, միայն ներկայացման մեջ, այսպես ասած,

աշխատանքային ժամերին: Կյանքում լրիվ հակառակն է: Թեպետ

այստեղ էլ ես շատ քիչ բան եմ հորինում ու համարյա ոչնչին չեմ

խառնվում: Չիմա գլխավորի մասին՝ պիեսում, իմ կարծիքով, կան մի

շարք անճշտություններ: Մեկի մասին ես արդեն ասացի, մյուսները

ինքներդ կնկատեք: Ինչո՞ւ եմ սա ասում: Չգիտեմ: Երևի այն

պատճառով, որ արածս այնքան էլ իմ դուրը չի գալիս:

Բայց... սա հենց այնպես:

Ինչպես իմ հերոսներն են ասում՝ «Բարձրաձայն ասված մտքեր»:

Աստիճանաբար բեմ են գալիս Ալքիմիկոսն ու

նրա աշակերտները:

Նրանք ուշադրություն չեն դարձնում Չեքիաթասացին,

զբաղվում են իրենց գործով:

ՉԵՔԻԱԹԱՍԱՑ – Իսկ հիմա, եթե, իհարկե, դեմ չեք, անցնեն
 պարտականություններին կատարմանը: Ի դեպ, մեր հեքիաթում ոչ
 հրեշներ կան, ոչ փերիներ, ոչ էլ ուրիշ անբնական արարածներ:
 Բայց, այնուամենայնիվ, սա հեքիաթ է: Թեկուզ այն պարզ
 պատճառով, որ բոլոր գործող անձինք և իրադարձություններն
 այստեղ հորինված են և կյանքում նախատիպը չունեն: Չավաստի են
 միայն Փիլիսոփայական քարի պատրաստման դեղատոմսերն ու
 նրա օգնությամբ «անազնիվ մետաղներից» ազնիվ մետաղներ
 ստանալու միջոցները:
 Ես կպատմեմ այս հեքիաթը, եթե խոստանաք, որ երբեք այն
 իրականություն չեք դարձնի... Ուրեմն այսպես. սա պատմություն է
 մի ալքիմիկոսի մասին, ով երևակայեց, թե մնացածներից խելացի է և
 այդ իսկ պատճառով հայտնվեց հիմար վիճակում: Նա ուզում էր
 գտնել Փիլիսոփայական քարը՝ չկռահելով անգամ, որ «Գիտական
 փորձի նկատմամբ ալքիմիական մոտեցումն ինքնին կեղծ է»: Նա
 սեր էր փնտրում, սակայն արժանի չէր դրան...
 Ահա սա է ըստ էության ողջ պատմությունը, ես կպատմեմ այն, եթե,
 իհարկե, խոստանաք, որ չեք ծիծաղի նրա վրա: Դա անչափ կարևոր
 է: Չատկապես հիմա, երբ աշխարհում շատ քիչ ալքիմիկոսներ են
 մնացել: Չի բացառվում նույնիսկ, որ մերը վերջինն է...
 (*Դուրս է գնում*):

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ

*Ալքիմիկոսի լաբորատորիան:
 Լսվում է՝ ինչպես է մոտենում կառքը:
 Մարդկանց խոսակցությունների պատառիկներ...
 Ներս են մտնում թագավորը, Տեղակալը:*

ԹԱԳԱՎՈՐ – (*Չի թաքցնում դժգոհությունը*) Բարև, Ալքիմիկոս:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Բարև Ձեզ, Ձերդ Գերազանցություն:

ԹԱԳԱՎՈՐ – Կարելի՞ է քեզ շնորհավորել:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Այո, Ձերդ Գերազանցություն: Երեկ իմ ծննդյան օրն էր:

ԹԱԳԱՎՈՐ – Չիմար կատակ էր, Ալքիմիկոս:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Այո, Ձերդ Գերազանցություն, վերջերս ես էլ եմ այդպես
 կարծում:

ԹԱԳԱՎՈՐ – Ինչպե՞ս են ընթանում գործերը:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Լավ, Ձերդ Գերազանցություն: Պարզվում է, եթե վերցնենք
 մաքուր սնդիկը, խառնենք ծծմբի հետ...

ԹԱԳԱՎՈՐ – (*Ձայրույթով*) Դու խոստացել էիր փորձարկումներդ ավարտել
 երկու շաբաթ առաջ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ձերդ Գերազանցություն, ինքներդ եք տեսնում, թե ինչ պայմաններում ենք աշխատում...

ԹԱԳԱՎՈՐ – Առայժմ ես տեսնում եմ, թե ինչ պայմաններում դուք չեք աշխատում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Քարից ոսկի ստանալու համար...

ԹԱԳԱՎՈՐ – *(Գոռում է)* Պարտադիր չէ ստանալ այդ ոսկին իմ գանձարանից:
Ես միտք չունեմ ֆինանսավորելու քո քմահաճույքները:
(Նյարդայնացած քայլում է լաբորատորիայում): Ես սպասում եմ՝ վերջապես, ե՞րբ ես ցուցադրելու քո արածի և իմ վստահության արդյունքները:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ձերդ Գերազանցություն, մեզ հաջողվել է բացել նյութի կայունության գաղտնիքը...

ԹԱԳԱՎՈՐ – Փակեք և աշխատեք բացել այն, ինչ պահանջվում է ձեզնից:
(Նկատում է պատի գծագիրը): Սա ի՞նչ է:

Յ-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Վիշապ... Վիշապ, որը կուլ է տալիս իր պոչը:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Այդպես են պատկերվում հետադարձ քիմիական պրոցեսները:

ԹԱԳԱՎՈՐ – Դե ինչ, տեսնում եմ, գիտությամբ զբաղվելու փոխարեն դուք գվարճանում եք պատերը նկարազարդելով ու թագավորական ունեցվածքը փչացնելով:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Սա ընդունված է ամբողջ աշխարհում, բայց եթե ինչ-որ բան Ձեզ դուր չի գալիս...

ԹԱԳԱՎՈՐ – Եթե ինչ-որ բան ինձ դուր չի գալիս *(փնտրում է ինչ ասել)...*

ՏԵՂԱԿԱԼ – Դուք գործում եք ինչպես այդ վայել է Ձերդ Արևափայլությանը:

Յ-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – *(Շշուկով)* Եթե չեմ սխալվում, ալքիմիայում արևը ոսկի է նշանակում:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – *(Շշուկով)* Չես սխալվում:

ԹԱԳԱՎՈՐ – *(Շրջվելով աշակերտների կողմը)* Դուք ուզում ես ասել, որ ես գործում եմ ոսկու թելադրանքով:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ձերդ Գերազանցություն...

ԹԱԳԱՎՈՐ – *(Նկատելի հանդարտված)* Լավ, լավ... դրա մեջ որոշակի իմաստ կա:
(Աշակերտներին): Բարև ձեզ:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐ – Բարև ձեզ, Ձերդ Գերազանցություն:

ԹԱԳԱՎՈՐ – Ինչո՞վ ինձ կուրախացնեք:

Յ-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Կարող եմք նոր անեկդոտ պատմել...

Աշակերտներից մեկը փորձում է նրան լռեցնել:

ԹԱԳԱՎՈՐ – *(Նյարդային)* Չետաքրքի՛ր է... Իսկ այն իսկապե՞ս նոր է:

Յ-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Այո, Ձերդ Գերազանցություն:

ԹԱԳԱՎՈՐ – Դե ինչ, պատմեք...

Յ-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Կառափնարանում լողում էին երկու կարապ և Պոնթեոս Պիղատոսը...

ԹԱԳԱՎՈՐ – *(Ընդհատում է)* Շա՛տ ծիծաղելի է...

Յ-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Ձերդ Գերազանցություն, սա դեռ վերջը չէ:

ԹԱԳԱՎՈՐ – *(Կտրուկ)* Բավական է:

Յ-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Ինչպես կասեք:

Դադար:

ԹԱԳԱՎՈՐ – *(Չերթով զննում է աշակերտներին)* Դե ինչ, եթե այդքան հանդգնություն ունեցաք ինձ համեմատելու հռոմեացի կուսակալի հետ, գուցե քաղաքավարություն ունենաք նաև ներկայանա՞լ: Եվ այսպես, ո՞վ է ձեզնից Պետրոսը, Անդրեասը... դեռ չե՞ք որոշել: Հասկանում եմ, դուք դեռ սովորում եք: Իսկ գոնե ջո՞ւրը... Կարո՞ղ եք ջուրը գինի դարձնել:

Չ-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Ձերդ Գերազանցություն, Դուք մեզ սխալ հասկացաք:

ԹԱԳԱՎՈՐ – Հնարավոր է, բայց չե՞ որ դա հատուկ է Հռոմի կուսակալներին: Ասում են, պետք է միայն խստիվ պահպանել անձնական հիգիենայի կանոնները: Ես պա՞րզ եմ արտահայտվում... Ի դեպ, կարծում եմ, դուք հիշո՞ւմ եք, ինչպես ավարտվեց այդ պատմությունը:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Համբարձումով...

ԹԱԳԱՎՈՐ – Սխալվում եք, այն ավարտվեց խաչելությանը: Իսկ ինչ դուք նկատի ունեք, դա արդեն ուրիշ պատմություն է ու նախորդի հետ ոչ մի կապ չունի: Թեև, հնարավոր է, ես էլի ինչ-որ բան ճիշտ չընկալեցի: Վերջերս ինձ հետ պատահում է: Օրինակ, ինչպե՞ս կիրամայեք հասկանալ: *(Վերցնում է սեղանին դրված գիրքն ու կարդում):* «Քիմիայի նպատակը ոչ թե ոսկի ստանալն է, այլ դեղերի պատրաստումը...»:

ԱԼՔԻՍԻԿՈՍ – Դա Պարացելսն է... գերմանացի բժիշկ Պարացելսը:

ԹԱԳԱՎՈՐ – Պարզ է, անհասկանալի է միայն ինչո՞ւ է նա այստեղ...

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Բանն այն է, որ Պարացելսը մշակել է...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ձերդ Գերազանցություն, համաձայն են ձեզ հետ՝ գրքում վիճելի շատ բան կա:

ԹԱԳԱՎՈՐ – *(Նստում է, Տեղակալը կանգնում է կողքին)* Լավ, համարենք, որ համոզեցիր ինձ ու ես, բարի մարդ լինելով, այսինքն՝ միամիտ, ավելի ճիշտ՝ միամիտ, և, այդ իսկ պատճառով՝ բարի, հավատացի, որ այս հերետիկոսությունն այստեղ պատահական է հայտնվել ու դու անկեղծորեն ցանկանում ես օգնել քո ժողովրդին: Ասա ինձ, ո՞ր փուլում է ձեր աշխատանքը:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Մենք համարյա ավարտել ենք:

ԹԱԳԱՎՈՐ – Ինչպե՞ս թե՛ ավարտել ենք:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ձերդ Գերազանցություն, այստեղ մեր արածի արդյունքն է: *(Թղթեր է տալիս):*

ԹԱԳԱՎՈՐ – Սա՞ ինչ է:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Հուզվելով)* Բանը նրանում է, որ թանկարժեք մետաղների՝ ոսկու, արծաթի ստանալը գործնական խնդիր է, նրա լուծումը կախված է առաջին հերթին լաբորատորիայի տեխնիկական հնարավորություններից: Փորձը ցույց տվեց, որ ճշմարտության հասնել կախարդական ծիսակարգով կամ գերբնական հայտնագործությամբ անհնաստ է: Այստեղ ամեն ինչ ապացուցված է: Սա նյութի միասնական բնույթի և նրա համընդհանուր վերափոխման գաղափարի տեսական հիմնավորումն է: Գուցե ձեզ համոզիչ չթվա, բայց մենք այլ ելք չունենք: Տպագրեք սա կամ ցույց տվեք մասնագետներին: Համոզված են, Դուք ըստ արժանվույն կգնահատեք այս աշխատանքը:

ԹԱԳԱՎՈՐ – Այսինքն, դու պնդում ես...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Մետաղների տրանսմուտացիան անհնար է առանց համապատասխան տեխնոլոգիայի:

ԹԱԳԱՎՈՐ – *(Հիստերիկ)* Ուրեմն, այս ամբողջ ժամանակ դու ինձ խաբե՞լ ես: *(Նրա կտրուկ շարժումից սրվակն ընկնում է հատակին):*

2-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Ձգույշ, Ձերդ Գերազանցություն, դա «Թագավորական օղի» է:

ԹԱԳԱՎՈՐ – Տեսնում են, դուք այստեղ վատ ժամանակ չեք անցկացնում:

ՏԵՂԱԿԱԼ – Ձերդ Գերազանցություն, երևի ծննդյան օրվանից է մնացել:

ԹԱԳԱՎՈՐ – Այո՛, մոռացել էի... Քանի՞ տարեկան դարձար:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Երեսուներեք:

ԹԱԳԱՎՈՐ – Խաչելու ճիշտ ժամանակն է ավազակներիդ հետ միասին:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Գուցե Յուդա է՞լ եք ինձ գտել:

ԹԱԳԱՎՈՐ – Գտնել պետք չէ, նա քո կողքին է:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դուք վատ եք ճանաչում իմ աշակերտներին:

ԹԱԳԱՎՈՐ – Ես լավ եմ ճանաչում իմ հպատակներին, Ալքիմիկոս: Մեկ շաբաթ հետո ես կվերադառնամ: Յուսամ, որ այդ ժամանակ, քո ծննդյան տարեդարձից բացի, ավելի կարևոր իրադարձությունն ընդլու առիթ կունենամ: Մնաս բարո՛վ:

Թագավորը գնում է: Տեղակալը հետևում է նրան, հետո ականջին ինչ-որ բան շշնջալով՝ վերադառնում է:

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Ալքիմիկոսի լաբորատորիան:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Դժգոհ)* Երկի չգիտես, բայց նրանք... Ես նկատի ունեմ Թագավորին... ոնց որ թե մեկնեցին:

ՏԵՂԱԿԱԼ – Ոչինչ, ես կհասնեմ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Յասնել Թագավորի՞ն... Մի՞թե դա հնարավոր է:

ՏԵՂԱԿԱԼ – Պատկերացրու՝ հնարավոր է: Եթե, իհարկե, չդոփես տեղում, այլ շարժվես նույն ուղղությամբ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Իսկապե՞ս: Ո՞նց ես միանգամից գլխի չընկա:

ՏԵՂԱԿԱԼ – Ոչինչ, դեռ ժամանակ ունես:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Կարծո՞ւմ ես...

ՏԵՂԱԿԱԼ – Կարևոր չէ, ինչ եմ կարծում ես, կարևորը...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ինչ է կարծում նա՛... Ես ճի՞շտ կռահեցի քո միտքը:

ՏԵՂԱԿԱԼ – Մոտավորապես:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դե ինչ, շատ հաճելի զրույց էր... բովանդակալից: Ցանկանում եմ բարի ճանապարհ:

ՏԵՂԱԿԱԼ – Բայց...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դու երևի տեղյակ ես, որ ես դեռ պիտի ոսկի ստանամ:
Այնպես որ... *(Չասկացնում է, որ խոսակցությունն ավարտված է):*

ՏԵՂԱԿԱԼ – Ճիշտն ասած, հենց այդ մասին էլ ուզում էի խոսել:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Լսում եմ:

ՏԵՂԱԿԱԼ – Ավելի լավ կլիներ, եթե թագավորին լսեիր:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դա՞ էիր ուզում ասել:

ՏԵՂԱԿԱԼ – Չամարյա...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Լավ, կմտածեմ: Վե՞րջ...

ՏԵՂԱԿԱԼ – Ինչո՞ւ դու ընդհանրապես ձեռնարկեցիր այս գործը:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Այսի՞նքն...

ՏԵՂԱԿԱԼ – Դե, այդ ոսկին, Փիլիսոփայական քարը... Ասա, որ դա քո միտքն է, ոչ թե թագավորինը: Նա երազել անգամ չէր կարող այդ մասին:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Իսկ հիմա՞...

ՏԵՂԱԿԱԼ – Իսկ հիմա, ինչպես տեսնում ես, արդեն երազում է:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Երազո՞ւմ է:

ՏԵՂԱԿԱԼ – Այո:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ես ոչ մի վատ բան չեմ տեսնում դրա մեջ:

ՏԵՂԱԿԱԼ – Չասկացի՞ր, թագավորները սովոր են, որ իրենց երազանքներն իրականանում են: Եվ, որպես կանոն, շատ դժգոհ են մնում, երբ հակառակն է լինում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Չա, բայց թագավո՞րն այստեղ ինչ կապ ունի:

ՏԵՂԱԿԱԼ – Միամիտ հարց:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Չնարավոր է, բայց այս գործը, չգիտեմ ինչպես ճիշտ արտահայտվեմ, ամենևին էլ թագավորի համար չի ձեռնարկվել:

ՏԵՂԱԿԱԼ – Չասկանում եմ... համայն մարդկության համար:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Թեկուզ...

ՏԵՂԱԿԱԼ – Դա ոչինչ չի փոխում՝ մեզ մոտ թագավորն է պատասխանատու համայն մարդկության համար:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Քմծիծաղում է)* Դե ուրեմն՝ շրջանը փակվեց:

Ներս է մտնում Նեն:

ՆԵ – Բարի օր, անբաններ: *(Տեսնելով Տեղակալին):* Ես... խանգարեցի՞:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ոչինչ... Գնա տղաների մոտ, ես հիմա կավարտեմ:

*Նեն գնում է բենի խորքը: Տեղակալը հայացքով հետևում է նրան:
Ալքիմիկոսը դա նկատելով՝ թեթևակի հազում է:*

ՏԵՂԱԿԱԼ – *(Շփոթահար)* Դու այդպես էլ հարցիս չպատասխանեցիր:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ինչո՞ւ սկսեցինք այս ամենը:

ՏԵՂԱԿԱԼ – Այո:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Չգիտեմ:

ՏԵՂԱԿԱԼ – Այդպես չի լինում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Լինում է: Պարզապես ես երբեք չեմ մտածել դրա մասին:

ՏԵՂԱԿԱԼ – Անհասկանալի է:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ի՞նչն է անհասկանալի:

ՏԵՂԱԿԱԼ – Ամեն ինչը:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Իսկ ինչո՞ւ ես կարծում, որ աշխարհում ամեն ինչ իր բացատրությունը պիտի ունենա:

*Բենի խորքում աշակերտները բուռն վիճում են ինչ-որ հարցի շուրջ:
Վերջապես նրանցից մեկը մոտենում է Ալքիմիկոսին:*

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Շեֆ, վառարանը միացնե՞նք:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Հա, հիմա կմոտենամ:

Աշակերտը միանում է ընկերներին:

ՏԵՂԱԿԱԼ – Քանի՞ տարի չեինք հանդիպել:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Հինգ, վեց...

ՏԵՂԱԿԱԼ – Այդպես էլ չամուսնացա՞ր:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ոնց որ թե՛ չէ:

ՏԵՂԱԿԱԼ – Ինչո՞ւ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Արդեն չեմ հիշում:

Դադար:

ՏԵՂԱԿԱԼ – Հասկանում եմ, գնալուս ժամանակն է:
Երկի ես այդպես էլ կանեի, եթե...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Եթե՞...

ՏԵՂԱԿԱԼ – Եթե քո փոխարեն ուրիշը լիներ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ցավոք, իմ փոխարեն՝ ես եմ:

ՏԵՂԱԿԱԼ – Այո... ինչպե՞ս քեզ բացատրեմ...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Արժե՞ որ...

ՏԵՂԱԿԱԼ – Ոչ: Միևնույն է, չես հասկանա:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ինչո՞ւ:

ՏԵՂԱԿԱԼ – Որովհետև չես ուզում:

Մոտենում է 1-ին աշակերտը, հարցական նայում Ալքիմիկոսին:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Բա՞ն է պատահել:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Վառարանը տաքացել է:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Լավ:

Աշակերտը գնում է բեմի խորքը:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Չգիտեմ... գուցե իրավացի ես:

ՏԵՂԱԿԱԼ – Ես սրտանց ուրախացա, երբ քեզ տեսա:
Ինձ թվում էր, մենք հիշելու շատ բան կունենանք... Կար ժամանակ,
երբ ամեն ինչ ուրիշ էր:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Այսի՞նքն...

ՏԵՂԱԿԱԼ – Այսինքն՝ պարզ, հասարակ, ու պետք չէր բառեր փնտրել,
ինչպես հիմա ենք անում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Պարզապես այն ժամանակ մենք ուրիշ էինք ու մեր շուրջն էլ
ամեն ինչ ուրիշ էր:

ՏԵՂԱԿԱԼ – *(Փորձում է մեղմել իրավիճակը)* Դե, քո շուրջը միայն
աղջիկներ էին:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Անկեղծ ասած, ես դրանից ոչինչ չեմ հասկանում, բայց
որքան ինձ հիշում եմ, դու սխալվում ես:

ՏԵՂԱԿԱԼ – Չգիտեմ... դու ավելի լավ կհմանաս: Ի դեպ, ի՞նչ եղան նրանք:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Մեծացան, երևի...

ՏԵՂԱԿԱԼ – Իսկ նա՞... ինչպե՞ս էր անունը:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Կտրուկ)* Չեմ հիշում:

ՏԵՂԱԿԱԼ – Իսկ ես հիշում եմ... մի շաբաթ էլ չէր անցել, երբ նա սիրահարվեց քեզ առաջին հայացքից:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Սրամիտ էր:

ՏԵՂԱԿԱԼ – Լսիր, այնպես պաշտոնական ես ինձ հետ խոսում, ոնց որ...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ոնց որ ի՞նչ:

ՏԵՂԱԿԱԼ – Ոնց որ ես թագավորը լինեմ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Այ սա արդեն անթույլատրելի մեծամտություն է:

ՏԵՂԱԿԱԼ – Ես նկատի ունեմ դիստանցիան:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դիստանցիան պահպանում են շքերթի ժամանակ, թե՞ կարծում ես...

ՏԵՂԱԿԱԼ – Վերջ տուր, դու լավ գիտես, ես ինչ եմ ուզում ասել: *(Դադար)*: Խոսակցությունը չի ստացվում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ներիր, նյարդերս են... Գործերդ ո՞նց են:

ՏԵՂԱԿԱԼ – Չգիտեմ, կարծես՝ վատ չեն:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Այդ դեպքում ինչո՞ւ չես գնում նրա մոտից:

ՏԵՂԱԿԱԼ – Ուշ է... և հետո, կներես, բայց ինձ թվում է, որ դա ավելի լավ է, քան կյանքդ մսխես անմահական ջուր ստանալու համար: Քանի՞ տարի ես ալքիմիայով զբաղվում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Ձղայիմ)* Մի քանի:

ՏԵՂԱԿԱԼ – Եվ ամբողջ ժամանակ այստե՞ղ ես:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Չէ, ինչո՞ւ... Երբեմն դուրս էլ եմ գնում... եթե պետք է լինում:

ՏԵՂԱԿԱԼ – Օրինակ՝ ո՞ւր:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Օրինակ՝ պետքարան...

ՏԵՂԱԿԱԼ – Տեսնում եմ, գոհ ես:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Պատկերացրու, ես ինչ-որ իմաստով անգամ երջանիկ եմ:

ՏԵՂԱԿԱԼ – Հիմարություն: Դու պարզապես վախենում ես խոստովանել ինքդ քեզ, նրանց, որ...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Որ ես անհաջողա՞կ եմ:

ՏԵՂԱԿԱԼ – Ես դա չասացի, բայց կար ժամանակ, որ քեզ նախանձում էի:

Հնչում է ներկայացման երաժշտական թեման:
Համապատասխանաբար փոխվում է երկխոսության երանգը:

ՏԵՂԱԿԱԼ – Այո, այո, դու նոր էիր սկսել փորձարկումներդ, ապակի էիր ստացել, բոլորը հիանում էին քեզնով, նոր հրաշքի էին սպասում... Իսկ հրաշք տեղի չունեցավ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Հեքիաթներում հրաշքներ չեն լինում:

ՏԵՂԱԿԱԼ – Ի՞նչ հեքիաթներ... Ես քո մասին եմ պատմում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Իմ ամբողջ կյանքը հեքիաթ է:

ՏԵՂԱԿԱԼ – Չգիտեմ, դու ինչը նկատի ունես, բայց եթե այդպես է, առավել ևս պիտի հրաշք կատարվեր:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ես ասացի. հեքիաթներում հրաշքներ չեն լինում:

ՏԵՂԱԿԱԼ – Ինչո՞ւ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Հրաշքը՝ երբ անսպասելի է, անսովոր, իսկ հեքիաթներում միշտ հաղթում է բարին: Մի՞շտ: Չամձրալի է... Ես հեքիաթներին չեմ հավատում:

ՏԵՂԱԿԱԼ – Եթե գաղտնիք չէ, ինչի՞ ես դու հավատում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Սիրուն...

ՏԵՂԱԿԱԼ – Իսկ եթե լո՞ւրջ:

Երաժշտությունն ընդհատվում է:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Իսկ եթե լուրջ՝ Արքիմեդի օրենքին ու ավանդների գաղտնիությանը:

ՏԵՂԱԿԱԼ – Դու չես փոխվել: Ավելի ճիշտ, կեղևն է փոխվել, իսկ բովանդակությունը նույնն է:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Քեզ դուր չի՞ գալիս:

ՏԵՂԱԿԱԼ – Ես Թագավորի մասին եմ մտածում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դա շատ լավ է, որ մտածում ես շեֆիդ մասին: Ի դեպ, ես քեզ չե՞մ խանգարում: (*Գնում է աշակերտների մոտ*):

ՏԵՂԱԿԱԼ – *(Գնում է նրա ետևից)* Դու արդեն չափահաս ես, և հուսով եմ, կարող ես սևը տարբերել սպիտակից...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Ինչ-որ սրվակ է գնում)* Հիշում եմ, փոքր ժամանակ երազում էիր նկարիչ դառնալ:

ՏԵՂԱԿԱԼ – *(Աստիճանաբար ոգևորվելով)* Փոքր ժամանակ ես երազում էի հրշեջ դառնալ... Մի՛ ընդհատիր... Ես կարող եմ հասկանալ, անգամ ընդունել անազնիվ մետաղից ազնիվ մետաղի վերափոխման հնարավորությունը, թեև նման աչքակապության հնարարավորությունը չնչին է: Բայց անգամ հաջողության դեպքում ես նույն հարցը կտամ՝ ինչի՞նչ է պետք: Դու վատնում ես լավագույն օրերդ, տարիներդ, ջախելությունդ, սերդ, վերջապես... Քո հիմար համառությունը նույնիսկ ինքնատիպ չէ: Ես Սիզիֆին նկատի ունեմ: Կարծում եմ, ծանոթ ես նրա աշխատանքին: Ներիր, երևի կոպիտ եմ, բայց մեր հարաբերություններն անցյալում իրավունք են տալիս ինձ...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Մոտենում է՝ լաթի կտորով ձեռքերը սրբելով)* Մի հարցում դու միանշանակ իրավացի ես. մեր հարաբերություններն իսկապես անցյալում են:

ՏԵՂԱԿԱԼ – Վիրավորվեցի՞ր:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Չէ, սա՛՝ հենց այնպես... բարձրաձայն ասված մտքեր: Ես քեզ ուշադիր լսում եմ:

Նկատում է, որ Նեն պատրաստվում է գնալ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Այդ ո՞ւր:

ՆԵ – Ավելի ուշ կգամ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Մնա, ես շուտով կազատվեմ...

Նեն հնազանդ վերադառնում է աշակերտների մոտ:

ՏԵՂԱԿԱԼ – Ես քեզ օգնել եմ ուզում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Կարծում ես, դրա կարիքն ունե՞մ:

ՏԵՂԱԿԱԼ – Դու շրջապատել ես քեզ խաղալիքներով, դու ուրիշ աշխարհում ես ապրում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Հետո՞ ինչ... Գուցե ես անմահական ջո՞ւր եմ գտել ու վերադարձրել եմ մանկությունս: Իմ կարծիքով, դա երջանկություն է:

ՏԵՂԱԿԱԼ – Մանկությունը չեն վերադարձնում, մանկության մեջ ընկնում են: Այսինքն՝ մանկամտանում են: Իսկ դա արդեն ոչ թե երջանկություն է, այլ մեծ դժբախտություն:

Թագավորին ոսկի է պետք, նա թքած ունի քո փիլիսոփայության ու գյուտի վրա:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ես գիտեմ:

ՏԵՂԱԿԱԼ – Դու գիտե՞ս... դու ամեն ինչ գիտես, անգամ գիտես, թե ինչ բան է երջանկությունը:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Այո: Իսկ ինչ է, դու չգիտե՞ս:

ՏԵՂԱԿԱԼ – Պատկերացրու՝ չգիտեմ: Թեպետ ծանոթներիցս մեկը ինձ բացատրեց, որ երջանկությունը կապույտ երկնքի կտորներից է ձուլված, և ամեն մեկս փորձում եմք ճանկել այդ կտորներից ամենամեծը:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ինչո՞ւ ես դա ինձ ասում:

ՏԵՂԱԿԱԼ – Հենց այնպես, տեղեկատվություն՝ խորհելու համար... Ես կփորձեմ խոսել նրա հետ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Պետք չէ:

ՏԵՂԱԿԱԼ – Գիտե՞ս այս ամենն ինչ հետևանքներ կարող է ունենալ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Թքած:

ՏԵՂԱԿԱԼ – Միայն թե պետք չէ այստեղ չգնահատված հանճար խաղալ: Հիմա դա մոդայիկ չէ: *(Ակնարկելով Նեիմ)*: Ի դեպ, նա ո՞վ է:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ինչպե՞ս ասեմ...

ՏԵՂԱԿԱԼ – Ասա՛ ինչ կա, ես կդիմանամ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Բառեր է փնտրում)* Նա... իմ ընկերն է:

ՏԵՂԱԿԱԼ – Ընդամենը:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ինչու քի՞չ է:

ՏԵՂԱԿԱԼ – Իսկ դու նրան հարցրու: Ինչ-որ մեկն ասել է, որ կնոջ ու տղամարդու միջև ընկերություն հնարավոր է միայն այն դեպքում, եթե նրանցից մեկը ֆիզիկական արատ ունի կամ առնվազն հիմար է:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Հիմարավուն ժպտով)* Դե ինչ, ոչ մեկն այսքան պարզ ու հասարակ ինձ չէր բնութագրել:

ՏԵՂԱԿԱԼ – *(Խփելով նրա ուսին)* Ինձ թվում է, նա էլ քո մասին ավելի լավ կարծիք չունի:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Մի քիչ էլ ու կսկսեմ զղջալ:

ՏԵՂԱԿԱԼ – Այդ մեկը իմ ծրագրում չկա, այնպես որ՝ ես գնացի:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ուղեկցե՞մ:

ՏԵՂԱԿԱԼ – Շնորհակալություն, պետք չէ: Ես իսկապես կփորձեմ քեզ համար ինչ-որ բան անել:

Տեղակալը գնում է: Ալքիմիկոսը մոտենում է աշակերտներին:

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Ալքիմիկոսի լաբորատորիան:

*1-ին, 2-րդ, 3-րդ աշակերտները շրջապատել են Ալքիմիկոսին,
4-րդը զբաղված է ինչ-որ իրեր հավաքելով:*

ՆԵ – Սուրճ եփե՞մ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – (Ցրված) Զա... (Նեն դուրս է գնում): Դուք լսո՞ւմ էիք...

2-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Այո...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Եվ ի՞նչ առաջարկություններ կան:

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Առաջարկում եմ հիասթափվել կյանքից:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Ես էլ եմ առաջարկում, եկեք հիմարություններ դուրս չտանք:

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Այո դեպքում ստիպված կլինենք լռել: Ուրիշ ելք չկա:

2-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Իսկապես, պետք է ինչ-որ բան անել:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Ինչո՞ւ ինչ-որ... Թագավորը հստակ ասաց ինչ պետք է անել:

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – (Ձմենլով «Արքայական օղու» սրվակը)
Գիտե՞ք, ինձ միշտ հետաքրքրել է, թե ինչի մասին են մտածում թագավորները քնելուց առաջ, երբ մենակ են մնում:

2-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – (Վերցնում է նրա ձեռքից սրվակը, դնում դարակին)
Խորհուրդ եմ տալիս չափավորել հետաքրքրություններիդ շրջանակը: Դա, իմիջիայլոց, և՛ քո շահերից է բխում, և՛ մեր:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Չեմ հասկանում, դա ի՞նչ կապ ունի...

2-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Գուցե չունի, գուցե և՛ ունի...

ՆԵ – (Ներս է մտնում) Տղաներ, սուրճը բոլորին չի հերիքի:

4-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Ես չեմ ուզում:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Ես էլ:

2-րդ ԱՇԱԿԵՐՏ – Եթե արհեստանոցը փակեն, ես գնալու ոչ մի տեղ չունենմ... Միայն՝ փողոց:

1-ին ԱՇԱԿԵՐՏ – Եթե արհեստանոցը փակեն, մենք բոլորս ստիպված կլինենք դուրս գալ փողոց թեկուզ նրա համար, որ ներսում փակված չմնանք:

Նեն սուրճի բաժակով մոտենում է Ալքիմիկոսին:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Շնորհակալ եմ:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Իսկ եթե գրողի ծո՞ցն ուղարկենք Թագավորին է՛լ, Տեղակալին է՛լ...

1-ին ԱՇԱԿԵՐՏ – Պետք չէ:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Ինչո՞ւ:

1-ին ԱՇԱԿԵՐՏ – «Ազդող ուժը համարժեք է հակազդող ուժին», Նյուտոնի երրորդ օրենքը:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Ե՞վ...

1-ին ԱՇԱԿԵՐՏ – Ի՞նչ «և»... Ասենք՝ ուղարկեցիր, հետո քեզ որտե՞ղ փնտրենք: Հասկանո՞ւմ ես, թե՞ն ես... Կշիռդ էլ են չէ հասարակության մեջ: Հաշվարկե՞մ քո արագացումը:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Ո՛չ:

4-րդ ԱՇԱԿԵՐՏ – Չգիտե՞ս, ուր եմ դրել լամպս:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – *(Ցույց է տալիս դարակը)* Այնտե՛ղ նայիր:

1-ին ԱՇԱԿԵՐՏ – *(Կծու ժպիտով)* Իրե՞րդ ես հավաքում:

4-րդ ԱՇԱԿԵՐՏ – Հա՛: *(Գնում է բեմի խորքը):*

2-րդ ԱՇԱԿԵՐՏ – Կոմպրոմիս է պետք գտնել:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Անձամբ ես նախընտրում եմ կոմպրոմիսիս:

1-ին ԱՇԱԿԵՐՏ – Շա՛տ սրամիտ է:

2-րդ ԱՇԱԿԵՐՏ – *(Նյարդային)* Վերջ տվեք: Սա ավելի լուրջ է, քան կարծում եք: Մեզ ընդամենը մի շաբաթ է մնացել:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Եթե հիշում եք, ժամանկին մի ընկեր ոսկի ընդամենը վեց օրում ստեղծեց: Եվ ոչ միայն ոսկի:

1-ին ԱՇԱԿԵՐՏ – Այդ ո՞վ:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Աստվածը: Բայց նա այսպիսի անբան աշակերտներ չուներ: *(Ալքիմիկոսիմ)* ճի՞շտ եմ ասում, շե՛ֆ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ոսկե խոսքեր...

2-րդ ԱՇԱԿԵՐՏ – Այս իրավիճակում նախընտրելի կլինեին ոսկե սալիկները:
(Ալքիմիկոսիմ): Իսկ դո՞ւ ինչ ես մտածում այս ամենի վերաբերյալ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ես ձեզ եմ լսում:

4-րդ ԱՇԱԿԵՐՏ – *(Կամաց)* Վաղուց էր պետք լսել:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ի՞նչ:

4-րդ ԱՇԱԿԵՐՏ – Ոչինչ:

1-ին ԱՇԱԿԵՐՏ – *(Հանգստացնելով բոլորին)* Սպասե՛ք, ամենասկզբից մենք տարված էինք նյութի միասնության ու նրա համընդհանուր վերափոխման գաղափարով: Հանուն դրա մենք գնացինք որոշակի զոհաբերությունների: Ու հիմա, երբ մենք գյուտի շեմին ենք, առնվազն անմտություն է հոգ տանել մեր միապետի նյութական բարօրության մասին:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Այո, բայց մեկ շաբաթ հետո նա վերադառնալու է...

Դադար:

2-րդ ԱՇԱԿԵՐՏ – Լավ, ենթադրենք, բացահայտեցինք միասնության օրենքը: Հետո՞...

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Ո՞նց թե... Կպարզվի, որ աշխարհում պետք չէ ոչինչ փոխակերպել, որովհետև քարը ոսկի է և ընդհակառակը: Կամ էլ, ասենք, դու թագավոր ես: Շե՛ֆ, ճի՞շտ եմ ասում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ո՛չ:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Ինչո՞ւ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ոչ բոլոր տառերն ես ճիշտ արտաբերում:

1-ին աշակերտը ծիծաղում է:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Ի՞նչ եղավ:

1-ին ԱՇԱԿԵՐՏ – Պատկերացրի քեզ թագավորի դերում:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Ես չեմ ուզում թագավոր լինել:

1-ին ԱՇԱԿԵՐՏ – Ինչո՞ւ:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Թագավորներն արտոնություններից բացի պարտականություններ էլ ունեն:

2-րդ ԱՇԱԿԵՐՏ – Օրինա՞կ...

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Օրինակ՝ նրանք ստիպված են թագ կրել:

2-րդ ԱՇԱԿԵՐՏ – Յետո՞ ինչ:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Իսկ դա, պետք է խոստովանեմ, այնքան էլ հաճելի բան չէ:

2-րդ ԱՇԱԿԵՐՏ – Որտեղի՞ց այդպիսի կասկածելի իրազեկություն:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Յենց իրենից: Չե՞ք հիշում, ինչ թախծոտ աչքերով էր նայում շուրջը:

2-րդ ԱՇԱԿԵՐՏ – Չէ:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Որովհետև ուշադիր չէիք...

2-րդ ԱՇԱԿԵՐՏ – Սպասիր, թագը ի՞նչ կապ ունի:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Ո՞նց թե, ինչ կապ ունի. դուրդ կգա՞ր, որ այս շոգին այդ ծանր ժեշտի կտորը դնեն գլխիդ:

2-րդ ԱՇԱԿԵՐՏ – Ժեշտի չէ՝ ոսկու:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Թեկուզ...

1-ին ԱՇԱԿԵՐՏ – Է՞լ ինչ կասես թագի մասին:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Այն փոխում է մարդուն:

1-ին ԱՇԱԿԵՐՏ – Ծիշտ է՝ բոյովացնում է...

2-րդ ԱՇԱԿԵՐՏ – *(Նյարդային)* Վե՛րջ տվեք, անհրաժեշտ է որևէ լուծում գտնել...

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Այս խնդիրը միայն մեկ լուծում ունի՝ կատարել պատվերը և կատարել այն մեկ շաբաթում:

2-րդ ԱՇԱԿԵՐՏ – Դա առնվազն լուրջ չէ:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Ուրեմն պատճառ չեմ տեսնում զրուցել կողմնակի բաների շուրջ:

4-րդ ԱՇԱԿԵՐՏ – *(Վերջապես հավաքել է իրերը)* Տեսնում եմ, ոչ մեկը չի համարձակվում խոստովանել:

1-ին ԱՇԱԿԵՐՏ – Ի՞նչ պիտի խոստովանենք:

4-րդ ԱՇԱԿԵՐՏ – Յիմա կասեմ: Բանը նրանում է, սիրելիներս, որ մեկ

շաբաթում մենք ոսկի չենք ստանա, եթե միայն մեզ բարի ցանկացող մեկը այն չուղարկի կապույտ եզրագծով սկուտեղի վրա: Բայց նման շանս, թույլ տվեք հավաստիացնել ձեզ, գրեթե չկա... Եվ դուք ինձանից լավ գիտեք դրա մասին... Հետևաբար, մեկ շաբաթ հետո թագավորը փոշեցրիվ կանի այս ակքիմիան...

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Ասենք թե...

4-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Ասենք, թե՝ չասենք, միևնույն է, փոշեցրիվ կանի ու վե՛րջ...

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Ուզում ես ասել, որ դու...

4-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Ես հոգնել եմ զբաղվել վերացական գիտություններով:

2-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Եվ ի՞նչ ես առաջարկում:

4-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Ես չունեմ ընդհանուր լուծում:

2-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Ոչինչ, խոսիր մասնավորի մասին:

4-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Ես գնում եմ... Ես վաղուց էի որոշել և այսօրվա իրադարձության հետ դա միայն անուղղակի կապ ունի: Կարող եք ինձ թույլ և փոքրոգի համարել... Ինձ համար միևնույն է: Ավելին, ես հանդգլած եմ, որ դուք բոլորդ էլ շատ շուտ կհետևեք իմ օրինակին:

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Իսկ ես կարծում էի, թե կատակում ես...

4-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Պատճառ չեմ տեսնում:
(*Ալքիմիկոսին*): Ես մի առաջարկ ունեմ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ասա:

4-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Ուզում եմ, որ դու երկնքից վայր իջնես... Ես էլ եմ ճախրել ամպերում ու պիտի խոստովանեմ, որ այնտեղ առանց մեզ էլ նեղվածք է:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ոչինչ, մի կերպ կհարմարվենք:

4-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Երկու տարում մենք կարող էինք գտնել ոսկին ու դրա շնորհիվ էլ՝ գիտությանը զբաղվելու հնարավորությունը:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Բայց մենք կկորցնեինք այդ երկու տարին:

4-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Եթե գտնեինք ոսկին, ոչինչ չէինք կորցնի: Քո կարճատեսությունն է այս անհիմաստ զոհաբերության պատճառը:

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Ալքիմիայի պատմությունը շատ ավելի հայտնի զոհաբերություններ է հիշում. Ռոջեր Բեկոնը, օրինակ, միայն հրաշքով փրկվեց խարույկից...

4-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Գիտե՞ս, նրա ճակատագիրն ինձ երբեք չի ոգևորել:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Պարզ է, դու երագում ես հանգիստ մեռնել սեփական անկողնում:

4-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Ինչո՞ւ մեռնել:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դու դա Բարձրյալին հարցրու: Ես միայն կարող եմ ասել, թե ինչու՝ սեփական անկողնում:

4-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Քո մեղքն է, որ այսօր մենք հայտնվեցինք անելանելի վիճակում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ինչքան հասկանում եմ, քեզ ճողոպրելու ելք է պետք: Գուցե ուզում ես ձեռքե՞րդ էլ լվանալ:

4-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Շնորհակալ եմ, ձեռքերս մաքուր են:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Հա, ես մոռացել էի, որ դու նրանցից ես՝ այսպես կոչված, մաքրակենցաղներից...

4-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Ես գնամ... *(Ուղղվում է դեպի դուռը):*

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Սպասի՛ր: Ուրեմն, սա քեզ համար կորցրած տարիներ՞ը էին:

4-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Ոչ, ինչո՞ւ... Ես այստեղ շատ բան իմացա:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Օրինա՞կ:

4-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Ամեն փայլող բան ոսկի չէ:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Ի՞նքո՞ր ես հնարել:

4-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Ոչ, արևելյան իմաստությունն է: Մնաք բարո՞վ:

*4-րդ աշակերտը հեռանում է:
Նեն նստում է Ալքիմիկոսի կողքը, գրկում նրան:*

Դադար:

2-րդ աշակերտը վերցնում է կիթառը:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Տեղը դիր:

2-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Ինչո՞ւ:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Ննջեցյալը հեռացավ, երաժշտության կարիք չկա:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Ելնում է տեղից)* Իսկ գուցե միայն նրա՞ հոգեհանգիստը չէ: Դե ինչ, ո՞վ է հաջորդը:

2-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Լավ չստացվեց: Երևի պետք է խոսեինք...

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Քո կարծիքով, մենք ինչո՞վ էինք զբաղված:

2-րԴ ԱՇԱԿԵՐՏ – Չգիտեմ... Այսքան տարի միասին էինք:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Չի՞ կարելի առանց սրտաճնլիկ տեսարանների:

2-րԴ ԱՇԱԿԵՐՏ – Ոսկի որ ստանայինք, ամեն ինչ այլ կերպ կլիներ:

3-րԴ ԱՇԱԿԵՐՏ – Ինչպե՞ս ես պատկերացնում այդ «այլ կերպը»:

2-րԴ ԱՇԱԿԵՐՏ – Ի՞նչ իմաստ ունի հիմա խոսել դրա մասին:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Երբ նավը խորտակվում է, առաջինը առնետներն են փախչում: Եվ դրա համար կան տարբեր պատճառներ: Այս դեպքում, օրինակ, ջրից չոր դուրս պրծնելն է:

2-րԴ ԱՇԱԿԵՐՏ – Պետք չէ՛...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Հասկանում եմ, ոմանց հաճելի չէ համեմատությունը առնետների հետ: Բայց սա իրականությունն է:

2-րԴ ԱՇԱԿԵՐՏ – Ի՞նչն է իրականություն, այն, որ նավը խորտակվո՞ւմ է:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ոչ, այն, որ առնետները փախչում են:

2-րԴ ԱՇԱԿԵՐՏ – Որքան ես հասկանում եմ՝ մեկը մյուսի հետևանքն է:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ոչ, բարեբախտաբար, այդ խեղճ կրծողները երբեմն սխալվում են և, կարծում եմ, իրերը հավաքելու լուրջ պատճառ չկա:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Թագավորը մի շաբաթից կվերադառնա, ի՞նչ պատասխան ենք տալու:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Ինչ-որ թղթեր է ցույց տալիս)* Եթե չորս մաս պղինձը հալել մեկ մաս անագի հետ, սպիտակ անագի ու կարմիր պղնձի փոխարեն կստացվի դեղնավուն ձուլվածք, որը ոսկուց չես տարբերի:

2-րԴ ԱՇԱԿԵՐՏ – Այսինքն, դու ուզում ես ասել, որ...

3-րԴ ԱՇԱԿԵՐՏ – Սկզբում ես էլ այդպես մտածեցի, բայց հետո պարզվեց, որ ստացածն ընդամենը ոսկե բրոնզն է: Բայց թագավորը առնվազն երեք-չորս շաբաթ տարբերություն չի զգա, մինչև այն չծածկվի փառով, սովորական պղնձի նման: Այդպես կշահենք մեկ ամիս, որպեսզի ավարտենք մեր ուսումնասիրությունն ու անգամ ստանանք Փիլիսոփայական քարը:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – *(Մտածկոտ)* Այստեղ ինչ-որ բան կա...

2-րԴ ԱՇԱԿԵՐՏ – Կախաղան:

3-րԴ ԱՇԱԿԵՐՏ – Ոչ, իհարկե, բայց եթե բացահայտվի...

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Ի վերջո, մենք կարող էինք և չիմանալ, որ մեր ստացածը

ոսկի չէ:

2-րդ ԱՇԱԿԵՐՏ – Դա շատ քիչ կթեթևացնի մեր վիճակը:

1-ին ԱՇԱԿԵՐՏ – Ի՞նչ ես առաջարկում:

2-րդ ԱՇԱԿԵՐՏ – Չգիտեմ, բայց դրամանենգի կարիերան ինձ երբեք չի ոգևորել:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – *(Կտրուկ)* Լսի՛ր, հիմա ծանր մանկությունդ հիշելու ժամանակը չի: Իմ կարծիքով, կարելի է փորձել:

2-րդ ԱՇԱԿԵՐՏ – Իսկ եթե մեկ ամսից հետո էլ քարը չգտնե՞մք:

1-ին ԱՇԱԿԵՐՏ – Ի՞նչ ենք կորցնում: Յոթ օրից մեզ փոշեցրիվ կանեն, թե երեսուն...

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Երեսունմե՛կ:

1-ին ԱՇԱԿԵՐՏ – Առավել ևս:

2-րդ ԱՇԱԿԵՐՏ – Ես կարծում եմ, պետք չէ հիմա որոշում ընդունել: Հավաքվենք վաղը, հարցը շատ լուրջ է:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դու նկատի ունես՝ կհավաքվե՞մք վաղը, թե ո՞չ:

2-րդ ԱՇԱԿԵՐՏ – Թեկուզ այդպես:

Դադար:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դե ինչ, եկեք հրաժեշտ տանք:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Այսի՞նքն...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ես նկատի ունեմ այն բարի խոսքերը, որոնք մարդիկ ասում են միմյանցից բաժանվելիս՝ նորից հանդիպելու ակնկալիքով:

Բոլորը, Նեից բացի, պատրաստվում են դուրս գալ:

1-ին ԱՇԱԿԵՐՏ – Դուք մնո՞ւմ եք:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ոչ, նա ձեզ հետ է գալիս:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Մենք կուղեկցենք:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Շնորհակալություն:

1-ին ԱՇԱԿԵՐՏ – Եթե պետք լինեմ՝ իմաց տուր:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Անպայման:

Աշակերտները գնում են: Նրանց ձայները՝ կուլիսներից:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ - Եկե՛ք գնանք հրապարակ, ասում են՝ թափառաշրջիկ դերասաններ են եկել:

1-ին ԱՇԱԿԵՐՏ – Չէ, արդեն ուշ է:

2-րդ ԱՇԱԿԵՐՏ – Ես հոգնել եմ: Եթե մեկ ամսից ոսկին չստանանք...

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Մի՛ անհանգստացիր: Եթե մեկ ամսից ոսկին չստանանք, մեր մասին հոգ կտանի անձամբ Թագավորը:

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՉՈՐՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Ալքիմիկոսի լաբորատորիան:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Չնայելով Նեիմ)* Տղաները ներքևում են: Ես խնդրեցի, որ քեզ ուղեկցեն:

ՆԵ – Ոչինչ, կսպասեմ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Բայց...

ՆԵ – Կասեմ, որ պայուսակս չէի գտնում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Գրկում է)* Իսկ դու չե՞ս ամաչում սուտ խոսել:

ՆԵ – Ամաչում եմ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Շոյում է Նեի վարսերը)* Դե լավ, հաշվի առնելով քո անկեղծ խոստովանությունը ու մի մեղմացուցիչ հանգամանք, մեղքերիդ թողություն են տալիս:

ՆԵ – Շնորհակալություն... Իսկ դա ի՞նչ մեղմացուցիչ հանգամանք է:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Իմ զգացմունքները քո հանդեպ:

ՆԵ – *(Շարտելով պայուսակը)* Հա-հա... շատ սրամիտ է:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ի՞նչը...

ՆԵ – Ամեն ինչը... Հատկապես քո զգացմունքների մասը իմ հանդեպ:

Նրանք պտտվում են շուրջանակի՝ խոսքամարտով տարված:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դու արդարացի չես:

ՆԵ – Իհարկե, չէ՞ որ սիրում եմ քեզ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Պետք է ասեմ, որ դու լավ ճաշակ ունես:

ՆԵ – Չէ, դու պարզապես հիասքանչ ես:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Մադամ, Դուք ինձ երես եք տալիս Ձեր հաճոյախոսութիւններով:

ՆԵ – Ցավոք, նույնը չի կարելի ասել Ձեր մասին, պարո՛ն...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Թանկագինս, հաճոյախոսութեան համար բառեր են պետք, իսկ ես ի՞նչ անեմ, որ բառեր չեն գտնուի:

ՆԵ – Իսկ դու փնտրի, ես կսպասեմ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Անիմաստ է: Երևի դա է պատճառը, որ ես կանանց մոտ երբեք հաջողութիւն չեմ ունեցել:

ՆԵ – Բայց Ձեր կենսագրութեան որոշ մանրամասները հենց հակառակի մասին են վկայում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դա բամբասանք է... Մեզ նախանձում են և ուզում են բաժանել:

ՆԵ – Քո բարեկամները:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ոչ, իհարկե: Ես նկատի ունեմ Արևը, Լուսինը, Աստղերը: Նայիր, ինչքան խղճուկ են նրանք, որովհետև դու ընտրել ես ինձ: Եվ հետո, ես բարեկամներ չունեմ: Միայն դու ես... Աշխատիր չդավաճանել ինձ:

ՆԵ – Ես արևելքի կիմ եմ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ես դա նկատի չունեի:

ՆԵ – Լավ, կմտածեմ:

Նախաբանն ավարտվեց: Հնչում է երաժշտական թեման:

ՆԵ – Հոգնե՛լ ես:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Մի քիչ:

ՆԵ – Գնա՛մ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ոչ:

ՆԵ – Չէ՞ որ դու պիտի աշխատես:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ինչի՞ համար:

ՆԵ – Մի շաբաթ հետո նրանք կվերադառնան:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Սարսափելի չէ: Կպատվիրեն հրաժեշտի ընթրիք,
ներողություն կխնդրեն ու կգնան գրողի ծոցը: *(Շարտում է սեղանի
թղթերը):*

ՆԵ – Դու դա չես անի:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Նկատի ունես գրողի ծոցը:

ՆԵ – Ես նկատի ունեմ ընթրիքը:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ներիր, բայց ես չեմ կարող հեռանալ առանց հրաժեշտ
տալու:

ՆԵ – Դու ընդհանրապես չես կարող հեռանալ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Կարծում ես, վճռականությունն չի՞ բավականացնի:

ՆԵ – Բանը դրանում չէ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Իսկ ինչո՞ւմ: Պետք է շատ միամիտ լինես նման գործ
սկսելու համար ու պարզապես հիմար, որ փորձես այն ավարտին
հասցնել:

ՆԵ – Կարծում ես...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Հարցը ոսկին չէ, ես այն կստանամ: Հարցը գնի մեջ է, որ
պիտի վճարեմ դրա համար:

ՆԵ – Առաջին անգամ եմ քեզ այսպիսին տեսնում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Նավում ճեղք կա. առնետները երբեք չեն սխալվում:

ՆԵ – Նա կվերադառնա:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Երկու անգամ նույն գետը չեն մտնում: Եթե նույնիսկ
վերադառնա՝ արդեն ինքը չի լինի:

ՆԵ – Գիտե՞ս, երբ դու ջղայնանում ես, նմանվում ես...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Աբելին... Աբելին, ում դավաճանեց հարազատ եղբայրը:

ՆԵ – Դու դեռ կատակո՞ւմ ես:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Չէ, այս անգամ փորձում եմ զարնացնել քեզ իմ
ինտելեկտով:

Երաժշտությունն ավարտվեց:

Դադար:

Նեն անվստահությամբ մոտենում է ու նստում է նրա կողքը:

ՆԵ – Ի՞նչ էիր անում երեկ երեկոյան:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ինչպես միշտ, մտածում էի քո մասին:

ՆԵ – Եվ որտե՞ղ էիր մտածում... Ես քեզ զանգում էի:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Սպասիր, հիմա հիշեմ: *(Իբր փորձում է հիշել)*: Երկնքում, դե իհարկե, երկնքում: Ես միշտ քո մասին եմ մտածում, երբ երկնքում եմ, և հակառակը:

ՆԵ – Բայց և այնպես...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Բարձրանում, հուզախռով պտտվում է նրա շուրջը)*
Ասացի՞ կգրում ես իսկապես բարձրացա դեպի երկինք, շրջեցի բոլոր մոտիկ ու հեռու մոլորակներում ու գալակտիկաներում...

ՆԵ – Ինչի՞ համար:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Որ քեզ արժանի աստղ գտնեմ:

ՆԵ – Գտա՞ր:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ոչ:

ՆԵ – Ինչո՞ւ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Հասկացա, որ քեզ արժանի աստղ չկա:

ՆԵ – Եվ այդ ժամանակ...:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Եվ այդ ժամանակ ես վերադարձա...

ՆԵ – Երկրագո՞ւնդ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Հա, ես որոշեցի աստղի փոխարեն նվիրել քեզ մի փոքրիկ իշխան...

ՆԵ – *(Հուզված)* Ի՞նչ...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – ...Որովհետև գիրքը...

ՆԵ – *(Հիասթափված)* «Փոքրիկ իշխանը»:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Այո...

ՆԵ – Լավագույն նվերն է, ես քեզ ճի՞շտ հասկացա:

ԱԼՔԻՄԻԿՈՍ –

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Այո... Ես գնացի դեպի հյուսիս, հարավ, արևելք... Փնտրեցի բոլոր գրախանութներում, բայց փոքրիկ իշխանին չհանդիպեցի...

ՆԵ – Շա՛տ հուզիչ պատմություն է:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դու իրավացի ես: Տղամարդու ժլատ արցունքները հորդառատ գետի պես հոսեցին աչքերիցս: Ու ես որոշեցի առաջարկել... Ինձ: Ճիշտ է, ես կապույտ արյուն չունեմ և աստղերի նման երկնքից չեմ ընկնում: Ընկնելուց էլ, որպես օրենք, երջանկություն չեմ պարգևում, բայց եթե ինձ հետ փաղաքշանքով վերաբերվել ու ժամանակին կերակրել, ես կարող եմ նվիրվել քեզ ... փոքրիկ իշխան:

ՆԵ – Ասա ինձ, ի՞նչ ես պատրաստվում անել:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Փոքրիկ իշխանի հետ կապվա՞ծ:

ՆԵ – Ո՛չ... Թագավորի:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Չգիտեմ:

ՆԵ – *(Յատակից հավաքելով թղթերը)* Ներիր, բայց այնպիսի տպավորություն է, կարծես դու պարծենում ես քո անելանելի վիճակով:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Մի՞թե ես դեռ ի վիճակի եմ տպավորություն գործել որևէ մեկի վրա:

ՆԵ – Պատկերացրու... Եթե, իհարկե, քեզ փաղաքշանքով վերաբերվել ու ժամանակին կերակրել: Ոչինչ չչփոթեցի՞:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Հիմա՞, թե՞ ընդհանրապես:

ՆԵ – Իհարկե, հիմա, ընդհանրապես ես գիտեմ՝ ինչ...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Իսկ այդ «ինչը» ի՞նձ հետ է կապված:

ՆԵ – Այո:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Պարզ է: Եվ, կարծում ես, որ դա լո՞ւրջ է:

ՆԵ – Այո:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Իբր հուզված)* Հուսամ, այդ «ինչը» դեռ հնարավոր է շտկել:

ՆԵ – Այո:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Փառք Աստծո: Խնդրում եմ արձանագրել՝ խոստանում եմ ուղղվել:

ՆԵ – *(Ծիծաղելով)* Չէ, պետք չէ...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Ծնկի գալով)* Թանկագինս, մի մերժիր ապաշխարող հանցագործին: Անկեղծ խոստովանությունը նվազեցնում է մեղքը:

ՆԵ – *(Օգնելով նրան բարձրանալ)* Բանը դրանում չէ: Պարզապես պետք չէ ինչ-որ բան փոխել:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ափսոս, ուզում էի ավելի լավը դառնալ:

ՆԵ – Դու չասացիր՝ ինչ ես պատրաստվում անել:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ես ասացի, դու երևի ուշադիր չեիր:

ՆԵ – Կրկնիր, եթե դժվար չէ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դժվար է, բայց ես կփորձեմ:

ՆԵ - Ե՞վ...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Սպասիր, մտքերս հավաքեմ:

ՆԵ – Հավաքեցի՞ր:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Չեմ հասկանում, քեզ ի՞նչը պարզ չի, չէ՞ որ քո ներկայությամբ էինք խոսում:

ՆԵ – Դու նկատի ունես բրո՞նզը...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Հա:

ՆԵ – Թագավորը չի ների կեղծիքը:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Մի ամսից ես կստանամ ոսկին:

ՆԵ – Մենք արդեն խոսել ենք դրա մասին երկու տարի առաջ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Երկու տարի առաջ ես դա ասում էի առանց որևէ հիմքերի:

ՆԵ – Քո կարծիքով, այդ հիմքերը կա՞ն հիմա:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ոչ, իհարկե, բայց հիմա դու կաս իմ կողքին: *(Փորձում է գրկել):*

ՆԵ – Պետք չէ, տղաները կարող են վերադառնալ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Տղաները գնացել են, և ես կարծում եմ, որ երբեք չեն վերադառնա: *(Սեղանի վրայից շարտում է գործիքները, գրքերը):*

ՆԵ – Դու արդարացի չես նրանց նկատմամբ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Միգուցե...

ՆԵ – Ես համոզված եմ, որ ամեն ինչ լավ կլինի:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Հասկանում եմ, երազիդ մեջ ճերմակ ձի ես տեսել:

ՆԵ – Ես քեզ եմ տեսել երազիս մեջ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Եվ հաճա՞խ ես այդպիսի մղձավանջներ հանդիպում:

ՆԵ – Հաճախ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Անպայման բժշկի կզմաս:

ՆԵ – Ինչո՞ւ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Քեզ մոտ սպիտակ տենդ է:

ՆԵ – Ես սիրում եմ քեզ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Տեսա՞ր, ասում էի, չէ՞...

ՆԵ – Դու մտածե՞լ ես, թե ինչ կարող է լինել, եթե մեկ ամիս հետո...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ոչ:

ՆԵ – Տղաները հավատում են քեզ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Շնորհակալ եմ, բայց փոխանցիր նրանց, որ ես մախրնտրում եմ համագործակցության մի քիչ այլ ձևեր: Հավատում են ինձ... Ես պայծառ ապագան չեմ, ոչ էլ՝ Հիսուսը: Անգամ գավառական շամանի դիպլոմ չունեմ:

ՆԵ – Բայց դու խոստացել էիր նրանց...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ես նրանց միայն դժվարություններ էի խոստացել և ինչպես տեսնում ես՝ խոստումս կատարեցի:

ՆԵ – Հասկանո՞ւմ ես, ամեն ինչ այդպես է, բայց բանը նրանում է, որ քո կյանքը, քո վարքը վերջին տարիներին նրանց հույս է տվել:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Այո, իհարկե՝ հույս, հավատ, սեր...

ՆԵ – Մի՛ ծաղրիր:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Սա կարծես թե նոր պատվիրա՞ն է: Մինչև հիմա գիտեի «Մի՛ սպանիր», «Մի՛ շնանա»...

ՆԵ – Հուսով եմ, դու դրանք երբեք չե՞ս խախտում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Գոռում է)* Ես միայն երթևեկության կանոնները չեմ խախտում, որովհետև դա վտանգավոր է կյանքի համար:

ՆԵ – Ես քեզ չեմ ճանաչում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Պատկերացրու՝ ես էլ նույնիսկ դադարել եմ ինքս ինձ բարևել: Չեմ ուզում բարևել ու վե՛րջ:

ՆԵ – Իսկ ի՞նչ ես դու ուզում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ե՞ս... Ես ուզում եմ պոզահարել...

ՆԵ – Իսկ եթե լո՞ւրջ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Իսկ եթե լուրջ. «Ես արեցի այն, ինչ կարող էի: Ավելի լավ թող անի նա, ով կարող է»:

ՆԵ – Կառափնարանում լողում էին երկու կարապ...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ի՞նչ...

ՆԵ – Հասկացիր, առաջ այս ամենը մարսվում-գնում էր, որովհետև տղաները ոգևորված էին, իսկ Թագավորը այլ գործերով էր զբաղված: Հիմա ամեն ինչ փոխվել է. Թագավորին ոսկի է պետք, տղաներին՝ վստահություն:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Իսկ քե՞զ:

ՆԵ – Ես ամեն ինչ ունեմ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Այդ դեպքում, ի՞նչն է քեզ այդպես հուզում:

ՆԵ – Ես վախենում եմ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Մեկ ամսից ես կստանամ ոսկին:

ՆԵ – Բայց...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Արի խոսենք ուրիշ բաների մասին:

ՆԵ – Ես քեզ սիրում եմ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Նեղիմ ցատեցնում է աթոռին)* Այ հենց դրա մասին էլ արի խոսենք: Գիտես, ես պարզել եմ, որ սերը սեզոնային զգացմունք է, ինչպես և ամեն ինչ բնության մեջ:

ՆԵ – Դու ուզում ես ասել...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Սիրո մեջ էլ կան գարուն, ամառ, աշուն ու ձմեռ: Չմեռն ամենավերջում է:

ՆԵ – Եվ ձմռանից հետո, իհարկե, նորից վերադառնում է գարունը...
Ես քեզ ճի՞շտ հասկացա:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ոչ, սիրո մեջ դա պարտադիր չէ:

ՆԵ – Տեսնում եմ՝ մեծ փորձ ունես:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Պարզապես ես շատ եմ կարդում:

ՆԵ – Այո, ես լսել եմ քո հարուստ գրադարանի մասին:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Եթե գրքերը նկատի ունես, ապա՝ այո:

ՆԵ – Իսկ եթե ո՞չ...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Իսկ եթե ոչ, չգիտեմ ինչի մասին եմք խոսում:

ՆԵ – *(Մտտենում է Ալքիմիկոսին)* Տարվա եղանակների: Ասա ինձ, իսկ կարո՞ղ է միշտ միայն գարուն լինել:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Չգիտեմ... Ոչ, երևի... Գարնան մեջ ինչ-որ թերասածություն կա, իսկ մարդուն չի բավարարում կիսատ-պռատությունը: Դրա համար էլ մենք միշտ արագացնում ենք ամռան գալը՝ չհասկանալով, որ դրան կիետևեն աշունը, ձմեռը:

ՆԵ – Դու պետք է օդերևութաբան դառնայիր:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Միայն՝ ոչ օդերևութաբան:

ՆԵ – Ինչո՞ւ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Մոտիկից դիտարկելիս պարզվում է, որ ես եղանակ չեմ ստեղծում:

ՆԵ – Դա ի՞նչ կապ ունի. եղանակը միշտ էլ ուրիշներն են ստեղծում: Օդերևութաբանը միայն հետևում է:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Անկեղծ ասած, դա էլ ինձ չի ոգևորում:

ՆԵ – *(Տխուր ժպտով)* Գիտես, քո թվացյալ անմիջականությամբ հանդերձ դու բացարձակապես անմատչելի ես, ինչպես...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ինչպես սառցե մարդը: Ես ճի՞շտ կռահեցի:

ՆԵ – Չգիտեմ, իմ հարուստ հավաքածուի մեջ սառցե մարդ չի եղել:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ափսոս: Բայց դու, իհարկե, փնտրում ես ու հույսդ չես կորցնում, չէ՞:

ՆԵ – Ես քեզ սիրում եմ...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Դուզված քայլում է բեմում)* Դու կարո՞ղ ես պատկերացնել քանի անգամ ու քանի մարդ է կրկնել այս բառերը ու միշտ չէ, որ նրանք տրիստաններ և իզոլդաներ են եղել, միշտ չէ, որ ասածի իմաստը ճիշտ են հասկացել, անկեղծ են եղել, ավելի հաճախ միայն անկողին քարշ տալու կամ փող վաստակելու նպատակով:

ՆԵ – Չետաքրքիր է, ասածներիցդ ո՞ր մեկին եմ ես պատկանում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Ծնկի է գալիս նրա առջև, համբուրում ձեռքերը. հիմա նա անկեղծ է)* Դո՞ւ... դու միակն ես աշխարհում, դրա համար եմ ուզում, որ մենք խոսենք ուրիշ լեզվով... աստղերի լեզվով:

ՆԵ – Ի՞նչ վատ է, որ քեզ լավ են ճանաչում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ինչո՞ւ:

ՆԵ – Ես քեզ կհավատայի:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Ոտքի ելնելով)* Պարզվում է, սիրո մեջ էլ օգտակար է գնալ տրորված արահետով:

ՆԵ – Ես դա չեի ուզում ասել:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Չող)* Ես՝ նույնպես...

ՆԵ – *(Շփոթահար)* Ներիր, բայց չեմ հասկանում երբ ես դու լուրջ, երբ կատակում ես: Թեև... երբ խոսում ես զգացմունքիդ մասին, դու միշտ կատակում ես:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ի սեր Աստծո, ինչպե՞ս կարելի է լուրջ խոսել սիրո մասին... Սերը հոգու տոն է:

ՆԵ – Ի՞նքո՞ւ ես հնարել:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ոնց որ թե... *(Վերցնում է կիթառը, նվագում: Դադար):*

ՆԵ – Մի՞թե չես հոգնել:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ինչի՞ց:

ՆԵ – Դե, սառցե մարդ լինելուց: Դու չունես ընկերներ, իսկ սիրո մասին միայն գրքերում ես կարդացել: Ես խոսում եմ սիրո՝ մասին, ոչ թե՝ կանանց:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Բանը նրանում է, որ ես բարեկամությանը չեմ հավատում՝ նախընտրում եմ համագործակցություն որևէ նպատակի շուրջ: Իսկ ինչ վերաբերում է սիրուն...

ՆԵ – Պետք չէ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դու ինչպես միշտ իրավացի ես:

ՆԵ – Գնան, տղաները սպասում են:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Մանավանդ, որ պայուսակդ վաղուց գտել եմ:
(Տալիս է պայուսակը):

ՆԵ – Շնորհակալություն:

*Նեն գնում է:
Հայտնվում է Հեքիաթասացը:*

ՀԵՔԻԱԹԱՍԱՑ – Ալքիմիան գիտություն է, որը ցուցանում է որոշ նյութերի,

հեղուկների պատրաստումը, որոնք մետաղի կամ ոչ կատարյալ նյութերի վրա լցնելով՝ վերջիններին դարձնում են կատարյալ նրանց շփման պահին... Ուրեմն, ուշադիր եղեք փիլիսոփաների խոսքերին ու լիովին կտիրապետեք արհեստի գաղտնիքին:

Չնչում է երաժշտություն:

*Չեքիաթասացը բուռն գործունեություն է ծավալում լաբորատորիայում
և ամեն ինչ կենդանանում է, լուսավորվում:*

ՉԵՔԻԱԹԱՍԱՑ – Իսկ հիմա վերցրեք փիլիսոփաների մերկուրին, այրեք մինչև վերածվի կանաչ առյուծի: Շարունակեք այրել ու նա կվերածվի կարմիր առյուծի: Չոր ավազի վրա կարմիր առյուծը խաղողի թթու սպիրտի հետ տաքացրեք ու գոլորշիացրեք. մերկուրին վերածվում է սուլֆուրի տեսակի, որը կարելի է կտրել դանակով: Սուլֆուրը դրեք կաթսայի մեջ ու թորեք՝ կստանաք անհամ հեղուկ, սպիրտ ու կարմիր կաթիլներ: Թորման կաթսայի պատերը կծածկվեն թեթև փառով, իսկ սրվակի մեջ կմնա իսկական վիշապը, քանզի նա խժռում է սեփական պոչը: Վերցրեք սև վիշապին ու տրորեք քարի վրա, մոտեցրեք շիկացած ածուխը՝ նա կբոցավառվի ու կստեղծի կանաչ առյուծին: Թող նա խժռի իր պոչը: Նորից թորեք, կստանաք այրող ջուր ու մարդկային արյուն՝ անմահական ջուրը դա է:

Բենում խավար է տիրում:

**ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ
ՉԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ**

Ալքիմիկոսի լաբորատորիան:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – «Ես արեցի այն, ինչ կարող էի: Ավելի լավ թող անի նա, ով կարող է»:

ՉԵՔԻԱԹԱՍԱՑ – Դա ո՞վ է...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Կարծեմ, Չիպոկրատը, իսկ դո՞ւ ով ես:

ՉԵՔԻԱԹԱՍԱՑ – Ե՞ս... Ես Չեքիաթասացն եմ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ես հեքիաթների չեմ հավատում, Չեքիաթասաց:

ՉԵՔԻԱԹԱՍԱՑ – Գիտեմ, դու հավատում ես սիրուն:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ոչ:

ՉԵՔԻԱԹԱՍԱՑ – Այո:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դու գիտես ամեն ի՞նչ:

ՉԵՔԻԱԹԱՍԱՑ – Ամեն ինչ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Այդպես չի լինում:

ՉԵՔԻԱԹԱՍԱՑ – Ես ամբողջ կյանքս նվիրել եմ դրան:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դրա մեջ ոչ մի նոր բան չկա:

ՉԵՔԻԱԹԱՍԱՑ – Միգուցե... Բայց իմ ինքնատիպությունը նրանում է, որ ես նաև գիտեմ, թե ինչից է կազմված աշխարհն ու ինչի համար է այն ստեղծվել:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Իսկ դու չեի՞ր կարող սխալվել:

ՉԵՔԻԱԹԱՍԱՑ – Ո՛չ: Եթե գրես տիեզերքի բոլոր ատոմների շարժման դիֆերենցիալ հավասարումները ու լուծես դրանք, կարող ես իմանալ այն ամենը, ինչ երբևէ եղել է կամ կատարվելու է:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դա ինձ հետաքրքիր չէ:

ՉԵՔԻԱԹԱՍԱՑ – Ինձ էլ, բայց դրան հասնելու համար ես շատ թանկ եմ վճարել:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դժգո՞հ ես:

ՉԵՔԻԱԹԱՍԱՑ – Պարզապես ձանձրալի է:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Երևի սխալվել ես նպատակիդ ընտրության մեջ:

ՉԵՔԻԱԹԱՍԱՑ – Ոչ, ես միայն ժամկետների մեջ եմ սխալվել:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ժամկետների՞...

*Լսվում է Նեի երաժշտական թեման:
Ալքիմիկոսը մի պահ մտազբաղ քայլում է:*

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ներիր, ես մի փոքր շեղվեցի:

ՉԵՔԻԱԹԱՍԱՑ – Ինչպես այս բոլոր տարիներին:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դու ի՞նչը նկատի ունես:

ՉԵՔԻԱԹԱՍԱՑ – Նույն արդյունքը: Ավելի ճիշտ՝ արդյունքի բացակայությանը: Իսկ ավելի ճիշտ՝ պատճառները: Միայն դու կարող ես ասել, թե ինչով էիր զբաղված այսքան ժամանակ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Գիտությամբ:

ՉԵՔԻԱԹԱՍԱՑ – Քո կարծիքով, ոսկի ստանալը գիտությունն չէ՞:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ոսկի ստանալու շատ միջոցներ կան, չգիտեմ, թե ո՞րը նկատի ունես:

ՉԵՔԻԱԹԱՍԱՑ – Ծծմբից ու սնդիկից: Լուցկի ունե՞ս:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Լուցկին մեկնելով)* Խնդրեմ:

ՉԵՔԻԱԹԱՍԱՑ – Շնորհակալ եմ: *(Ծխում է):*

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Արի պայմանավորվե՞նք. դու հարց չես տալիս, ես չեմ պատասխանում: Թե չէ կսկսեմ կասկածել հնարավորություններիդ վրա:

ՉԵՔԻԱԹԱՍԱՑ – *(Նստում է աթոռին)* Ես, իհարկե, գիտեմ այդ հարցերի պատասխանները, պարզապես ուզում էի իմանալ, թե ի՞նչ ես մտածում դրա մասին:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ի՞նչ նշանակություն ունի: Եթե քեզ հավատամ, այն, ինչ տեղի է ունենում մեր շուրջը, վաղուց կանխորոշված է:

ՉԵՔԻԱԹԱՍԱՑ – Այո:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Չետևաբար, միտքը չի վերահսկում ո՛չ արարքները, ո՛չ էլ զանցանքները:

ՉԵՔԻԱԹԱՍԱՑ – Այո:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Մարդը ոչինչ է, որն անիմաստ մասնակցում է համընդհանուր շարժմանը՝ ենթարկվելով ընդամենը դիֆերենցիալ հաշվի օրենքին:

ՉԵՔԻԱԹԱՍԱՑ – Այո:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Բայց չէ՞ որ դա անհեթեթություն է:

ՉԵՔԻԱԹԱՍԱՑ – Ի՞նչն է անհեթեթություն:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ամեն ինչը՝ տիեզերքը, նրա կառուցվածքը...

ՉԵՔԻԱԹԱՍԱՑ – Պատասխանատու հայտարարություն է, Ալքիմիկոս:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Պարզապես անպատասխանատու մտահղացում է, Չեքիաթասաց:

ՉԵՔԻԱԹԱՍԱՑ – Քեզ դուր չի գալիս մտքի առկայությունն ու կանոնակարգո՞ւմը:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ինձ սպանում է ինպրովիզացիայի բացակայությունն ու սխեման:

ՉԵՔԻԱԹԱՍԱՑ – Քեզ քաո՞ս է պետք:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ինձ պետք է թեկուզ ինչ-որ իմաստ:

ՉԵՔԻԱԹԱՍԱՑ – *(Պատրաստվում է գնալ)* Չեմ խոստանում, բայց առաջին իսկ հնարավորության դեպքում ասածներդ կփորձեմ հասցնել...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ո՞ւմ:

ՀԵՔԻԱԹԱՍԱՑ – Համապատասխան ատյաններին, օրինակ՝ Աստծուն:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դու նրան հավատո՞ւմ ես:

ՀԵՔԻԱԹԱՍԱՑ – Ոչ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Հետաքրքիր է, ինչի՞նչ ես դու հավատում:

ՀԵՔԻԱԹԱՍԱՑ – Ես երբեք չեմ մտածել այդ մասին:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Կյանքը վատնել այն հասկանալու համար՝ չհավատալով նույնիսկ հաջողությա՞նը:

ՀԵՔԻԱԹԱՍԱՑ – *(Վերադառնում է)* Ի՞նչ է նշանակում «հավատալ հաջողությանը»: Մենք ապրում ենք մեր ամենօրյա հոգսերով: Իսկ բանաստեղծների ու պարապ փիլիսոփաների հնարած սերը, երջանկությունը, կյանքի իմաստը առկա են մեր շուրջը, ավելի շուտ՝ բացակայում են այս կամ այն պատճառով և ոչ մի բացատրության կարիք չունեն:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Կարո՞ղ ես ասել, ինչ է սերը:

ՀԵՔԻԱԹԱՍԱՑ – Քո ինչի՞նչ է պետք:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ընդհանուր զարգացման համար:

ՀԵՔԻԱԹԱՍԱՑ – Սերը...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Սպասիր, դա նո՞ւյնպես դիֆերենցիալ հավասարումների օգնությամբ...

ՀԵՔԻԱԹԱՍԱՑ – Քեզ չի բավարարում իմ աշխատառ՞ճը:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ես լսում եմ...

ՀԵՔԻԱԹԱՍԱՑ – Գիտե՞ս, դա այդքան էլ հեշտ չէ: Անհրաժեշտ են որոշ թվեր, հաշվարկներ... Եվ հետո, վախենում եմ, որ առանց համապատասխան գիտելիքների քեզ պարզ չի լինի: Ես կփորձեմ պատասխանել՝ ելնելով սեփական փորձից:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Սեփական փորձի՞ց:

ՀԵՔԻԱԹԱՍԱՑ – Այո: Մի ժամանակ ես էլ էի բանաստեղծություններ գրում, մեր մեջ ասած՝ անհաջող, բայց դա չէ կարևորը... Եվ, բնականաբար, տալիս էի ինձ այդ հարցը:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Եվ ի՞նչ:

ՀԵՔԻԱԹԱՍԱՑ – Սերը ծիածան է՝ բազմագույն ու բազմերանգ...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ուզում ես ասել՝ սերը պատրա՞նք է:

ՀԵՔԻԱԹԱՍԱՑ – Այո, մասսաների համընդհանուր տեսախաբություն:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ասա ինձ՝ կարելի՞ է ներել դավաճանությունը:

ՀԵՔԻԱԹԱՍԱՑ – Օրենքները, սահմանները և նմանատիպ պայմանականություններն ընդամենը խաղալիք են մարդկության համար, որոնք զվարճանքի փոխարեն բերում են բազմաթիվ անհարմարություններ, տառապանք, լավագույն դեպքում՝ գլխացավանք: Բայց դա քեզ չի վերաբերում. դու թույլ մարդ ես:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Թո՞ւյլ:

ՀԵՔԻԱԹԱՍԱՑ – Այո...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ասա, ես երջանիկ կլինե՞մ:

ՀԵՔԻԱԹԱՍԱՑ – Երջանկությունը ապուշների բախտաբաժինն է: Այդ վիճակում նույնիսկ կարճատև գտնվելու դեպքում պահանջվում է անհապաղ բժշկական միջամտություն:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Վերջին հարցը. ես կստանա՞մ ոսկի:

ՀԵՔԻԱԹԱՍԱՑ – Ոչ:

Ներկայացման երաժշտական թեման:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Միևնույն է, ես ոչնչի համար չեմ զղջում:

ՀԵՔԻԱԹԱՍԱՑ – Գիտե՞ս ինչ, երբ դու արդեն երեսունն անց ես ու երեկ նորից ծննդյանդ օրն էր, երբ Թագավորը քեզ սկսել է դիմել «դու»-ով, իսկ դու դեռևս «երիտասարդ մասնագետ» ես, երբ ընդունելության ես գնում համակուրսեցուդ մոտ կամ ընդհակառակը՝ վերադառնում համադասարանցուդ աշխատասենյակից, երբ հարսնացուդ հեռախոսով ասում է քեզ, որ այսօր ժամանակ չունի... ուրեմն ինչ-որ տեղ, ինչ-որ ժամանակ, ինչ-որ բանում դու, հավանաբար, սխալ ես եղել, Ալքիմիկո՛ս: *(Հեռանում է):*

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ

**ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ**

Ալքիմիկոսի լաբորատորիան:

ՉԵՔԻԱԹԱՍԱՑ – *(Հանդիսատեսին)* Չիմա ձեզ կասեմ, թե ինչ է Փիլիսոփայական քարը: Արևը, Լուսինը, ագաթը քարի էությունն են: Բայց այդ քարերը հողի տակ մեռած են, իրենք իրենց չեն գործում: Իսկական ոսկին կամ արծաթը կարելի է ստանալ միայն մարդու մասնակցությամբ:

Աղմուկով ներս են գալիս Ալքիմիկոսն ու աշակերտները:

ՉԵՔԻԱԹԱՍԱՑ – *(Հանդիսատեսին)* Ուրեմն, եղեք ուշադիր... Եթե ձեր սուր միտքը թափանցել է նախորդ ասելիքիս խորքը, երբ ձեզ համար բացահայտեցի պահանջվող նյութը, ուրեմն հիմա տիրապետում եք բոլոր փիլիսոփաների ցանկության առարկային:

*Ստտեցող կառքի, ձիերի խրխնջոցի, քայլերի ձայներ:
Ներս են գալիս Թագավորն ու Տեղակալը:
Չեքիաթասացը հեռանում է:*

ԹԱԳԱՎՈՐ – *(Բարձր տրամադրություն ունի)* Ուրախ եմ քեզ տեսնել, Ալքիմիկոս: Դու կատարեցիր խոստումդ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Արեցի, ինչ կարողացա, Ձերդ Գերազանցություն:

ԹԱԳԱՎՈՐ – Դու արեցիր ավելին, քան կարող էիր:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ես մեռակ չեի:

ԹԱԳԱՎՈՐ – Շնորհավորում եմ բոլորիդ:

Յ-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Շնորհակալություն, Ձերդ Գերազանցություն:

ԹԱԳԱՎՈՐ – Ճիշտն ասած, համարյա չեի հավատում քեզ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Գիտեմ, Ձերդ Գերազանցություն:

ԹԱԳԱՎՈՐ – Վերջին անգամ ես շատ դժգոհ հեռացա:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Այո, Ձերդ Գերազանցություն:

ԹԱԳԱՎՈՐ – Չրաշալի է: Թե չէ խիղճս ոնց որ հանգիստ չէր... Բայց, անկեղծ ասա, առանց իմ դնգստոցի այսօր ոսկին չէր լինի:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Չնարավոր է, Ձերդ Գերազանցություն:

ԹԱԳԱՎՈՐ – Ես հաստատ գիտեմ, որ չէր լինի:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դուք իրավացի եք, Ձերդ Գերազանցություն:

ԹԱԳԱՎՈՐ – Դե լավ, հերոս, ցույց տուր հրաշքը:

Ալքիմիկոսը դարակից վերցնում, ցուցադրում է ձուլվածքները:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ահա սրանք են, Ձերդ Գերազանցություն:

ԹԱԳԱՎՈՐ – *(Ակնոցները հագնում է և ոգևորված զննում է)* Իսկական ոսկի է: Ու դու այն ստացար սովորական երկաթի՞ց:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Այնքան էլ չէ, Ձերդ Գերազանցություն:

ԹԱԳԱՎՈՐ – Իսկ ինչպե՞ս... բացատրիր, խնդրեմ, ես չեմ համբերում: Հասկանում եմ, դա գաղտնիք է, բայց այստեղ, կարծում եմ, կողմնակի մարդիկ չկան:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Անշուշտ, Ձերդ Գերազանցություն... Այստեղ նայեք: *(Ցույց է տալիս ինչ-որ գծագրեր)*: Փիլիսոփայական քարն ստանալու համար վերցնում ենք սովորական սնդիկն ու տաքացնում, մինչև վերածվում է կանաչ առյուծի: Դրանից հետո ավելի ենք շիկացնում, ու նա վերածվում է կարմիր առյուծի: Նրան եռացնում ենք խաղողի թթու սպիրտի մեջ և սնդիկը վերածվում է պինդ մերկուրիի, որի ներսում իսկական վիշապն է, որովհետև խժռում է սեփական պոչը: Եթե շիկացած ածուխը մոտեցնենք, կրկին կստանանք կանաչ առյուծին: Ու եթե այն թորենք, վերջապես կստանանք այրող ջուր ու մարդկային արյուն: Սա էլ կենարար հեղուկն է:

ԹԱԳԱՎՈՐ – Ոչինչ չհասկացա, բայց շատ հետաքրքիր է:

Յ-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Մենք ինքներս էլ շատ բան չենք հասկանում, Ձերդ Գերազանցություն:

ԹԱԳԱՎՈՐ – Ցնցո՞ղ է: Դուք նույնիսկ պատկերացնել չեք կարող, թե ինչ եք արել:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Մենք պատվեր էինք կատարում, Ձերդ Գերազանցություն:

ԹԱԳԱՎՈՐ – Այո, այո, իմ պատվերը... Ասա, Ալքիմիկոս, դու երջանի՞կ ես... Ոչ, ոչ, պետք չէ ոչինչ ասել, ամեն ինչ առանց այդ էլ պարզ է: *(Նայում է խոժոռ դեմքերով աշակերտներին)*: Ի դեպ, ինչո՞ւ ուրախությունից չեք ցայտկոտում, ձեռքերը չեք թափահարում, գլուխկոնծի չեք տալիս:

Յ-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Մենք չգիտենք, թե ինչ են անում նման դեպքերում: Մենք դեռ փորձ չունենք:

ԹԱԳԱՎՈՐ – *(Փորձում է նրանց ոգևորել)* Ի՞նչ փորձ, սատանան տանի, երբ մենք առաջինն ենք: Հասկանո՞ւմ եք, մենք առաջինը Փիլիսոփայական քարի օգնությամբ ոսկի ենք ստացել: Հիմա մեր պետությունը ամենահարուստն է: Ուրեմն և՛ ամենահզորը:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Մենք ուրախ ենք, Ձերդ Գերազանցություն:

ԹԱԳԱՎՈՐ – Ոչ, դուք ոչինչ չեք հասկանում...

Գիտե՞ք, ինչն է գիտնականի ու պետական այրի տարբերությունը:

Դուք՝ գիտեք եք, իսկ մենք՝ կարող ենք:

Ուստի առաջինները պիտի հետևեն երկրորդների ասածին:

(Ալքիմիկոսին): Այնպես որ, հավատա ինձ. այսօր մեծ տոն է:

(Աշակերտներին): Այնպիսի տեսք ունեք, ասես ոսկու փոխարեն

ժանգ եք ստացել: Նախորդ անգամ ավելի համարձակ էիք:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ներեք մեզ, ամեն ինչ այնքան անսպասելի էր:

ԹԱԳԱՎՈՐ – Տեսնում եմ... *(Զննում է գիրքը)*: Պարացելս. լավ գիրք է:

(Նստում է, Տեղակալը կանգնում է կողքը): Դե ինչ, աշխատանքդ

գնահատելու ճիշտ ժամանակն է: Լսում եմ քեզ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ես ասելու բան չունեմ:

ԹԱԳԱՎՈՐ – Ո՞նց թե...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Մենք մեր սիրած գործով էինք զբաղված:

ԹԱԳԱՎՈՐ – Ես բարձր եմ գնահատում քո համեստությունը, Ալքիմիկոս,

բայց այսօր դուք դատարկ հաճոյախոսություններից զատ շատ

ավելիին եք արժանի:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Համեստության հարց չկա, Ձերդ Գերազանցություն, և հետո

մենք լրիվ դեռ չենք ավարտել...

ԹԱԳԱՎՈՐ – Բայց դուք ոսկի ստացել եք, չէ՞:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Այո...

ԹԱԳԱՎՈՐ – Դրա համար էլ պատրաստվում եմ վարձատրել ձեզ, իսկ ինչ

վերաբերվում է մանրուքներին...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ձերդ Գերազանցություն...

ԹԱԳԱՎՈՐ – *(Խիստ)* Լսում եմ քեզ, Ալքիմիկոս:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Լավ... *(Ինչ-որ թղթեր է բերում)*: Եթե հիշում եք, նախորդ

անգամ ձեզ մի ձեռագիր աշխատություն ցույց տվեցի՝ «Նյութի

միասնական բնույթի տեսական հիմնավորումը»:

ԹԱԳԱՎՈՐ – Այո, ինչ-որ բան հիշում եմ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Տալիս է ձեռագիրը)* Տպագրե՛ք այս... Անհրաժեշտ է, որ

մասնագետները ծանոթանան դրան: Սա էլ կլինի մեր պարգևը:

ԹԱԳԱՎՈՐ – Լավ, կկատարեմ խնդրանքդ: *(Ձեռագիրը փոխանցում է*

Տեղակալին): Կարծում եմ, մի երկու ամսից կտպագրվի:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Երկու ամսի՞ց:

ԹԱԳԱՎՈՐ – Առնվազն երկու ամսից:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Շփոթահար)* Ինչո՞ւ այդքան ուշ:

ԹԱԳԱՎՈՐ – *(Գրկուն է Ալքիմիկոսին)* Ի՞նչն է քեզ անհանգստացնում: Մի տեղ գնացեք, հանգստացեք, իսկ ամիս, ամիսուկես հետո վերադարձեք...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Մտացրիվ)* Այո, այո... իհարկե... Ոչ, այստեղ գործեր ունենք...

ԹԱԳԱՎՈՐ – Տեսնում եմ, որ քեզ ինչ-որ բան վշտացրեց:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ոչ, ոչ, ամեն ինչ կարգին է:

ԹԱԳԱՎՈՐ – Չրաշալի է: Դե ինչ, կարծում եմ, պետք է նշել այս իրադարձությունը:
(Աշակերտներին): Ի՞նչ եք կարծում: Ես հիշում եմ, դուք այստեղ ինչ-որ օղի ունեիք:

ՏԵՂԱԿԱԼ – Արքայական օղի:

ԹԱԳԱՎՈՐ – Չարմար է, թեև ես ընդամենը Թագավոր եմ:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Ձերդ Գերագանցություն, բանը նրանում է, որ Արքայական օղին աղաթթվի խառնուրդ է...

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Այդպես ենք ասում, որովհետև նրա մեջ լուծվում է նույնիսկ ոսկին:

ԹԱԳԱՎՈՐ – Արքայական, որովհետև նրա մեջ լուծվում է նույնիսկ ոսկին: Չարմար անվանում է: Իսկ սովորական օղի չունե՞ք:

2-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Կա, Ձերդ Գերագանցություն:

ԹԱԳԱՎՈՐ – Կարծում եմ, այսօր մենք բոլորս էլ վաստակել ենք...

Աշակերտները բերում են օղի, բաժակներ:

ԹԱԳԱՎՈՐ – Լցրեք: Ես ուզում եմ խմել ձեր կենացը, ձեր բարեկամության, գործին նվիրվածության և այն գործի, որ դուք այդպես հավատարմորեն ծառայում եք: Գիտեմ՝ հեշտ չէր, ոչ բոլորը դիմացան, գիտեմ՝ արժանի եք ավելի լավ խոսքերի ու հանդաված եմ, որ դրանք դեռ լսելու եք: Ձեր առջև բացվում են լայն հեռանկարներ: Վստահ քայլերով գնացեք ձեր ապագային ընդառաջ և իմացեք. ես միշտ հավատացել ու հավատում եմ ձեզ:
(Խմում է): Արքայական օղի է, Ալքիմիկոս:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ներեցեք, ոչինչ չհասցրեցինք պատրաստել...

ԹԱԳԱՎՈՐ – Մի անհանգստացեք, ամեն ինչ հոյակապ է:

ՏԵՂԱԿԱԼ – Կարևորը՝ ժամանակին հասցրեցիք: *(Ցույց տալով ոսկու ձուլվածքները)*: Այ սա է ամենաճոխ հյուրասիրությունը:

ԹԱԳԱՎՈՐ – *(Մտտենում է աշակերտներին)* Անցյալ անգամ դուք ինձ մի շատ հետաքրքիր անեկդոտ պատմեցիք... Ոնց է՞ր... Կառափնարանում լողում էին երկու կարապ... և Յիսո՞ւսը...

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Այո, Ձերդ Գերազանցություն:

ԹԱԳԱՎՈՐ – Թե՞ Պիղատոսը:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Պիղատոսը, Ձերդ Գերազանցություն:

ԹԱԳԱՎՈՐ – Յիմա Յիսո՞ւսը, թե՞ Պիղատոսը:

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Տարբերություն չկա, Ձերդ Գերազանցություն:

ԹԱԳԱՎՈՐ – Սխալվում ես, թանկագինս, Յիսուսը Աստծո որդին էր, իսկ Պիղատոսը...

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Մենք բոլորս Աստծո որդիներն ենք:

ԹԱԳԱՎՈՐ – Լավ, թող ձեր ասածը լինի: Եվ այսպես, նրանք լողում էին...

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Այո, Ձերդ Գերազանցություն, առաջին կարապը, երկրորդ կարապը ու Պետրոս առաքյալը:

ԹԱԳԱՎՈՐ – Պետրոս առաքյալ՞ը:

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Այո, Ձերդ Գերազանցություն, նրանք բոլորն էլ այնտեղ լողում էին...

ԹԱԳԱՎՈՐ – Ինչո՞ւ:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Բարենպաստ եղանակ էր:

ԹԱԳԱՎՈՐ – Լավ, լողում էին, իսկ հետո՞...

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Վերջ, Ձերդ Գերազանցություն:

ԹԱԳԱՎՈՐ – Այդ ինչպե՞ս:

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Սա անավարտ տարբերակն է, Ձերդ Գերազանցություն, մենք դեռ աշխատում ենք դրա վրա...

ԹԱԳԱՎՈՐ – Յետաքրքիր է:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Շա՛տ...

ԹԱԳԱՎՈՐ – Ուզո՞ւմ եք ձեզ օգնեն: Սիրում եմ ծիծաղելի պատմություններ հորինել:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Սա շատ ծիծաղելի պատմություն է:

ԹԱԳԱՎՈՐ – Պայմանավորվեցի՞նք:

1-ին ԱՇԱԿԵՐՏ – Ճիշտն ասած, մեր հույսը Ձեր վրա էինք դրել:

ԹԱԳԱՎՈՐ – Կատակում եք, բայց սրտանց ուրախանալ չեք կարող:

ԱԼՔԻՍԻԿՈՍ – Հոգնել ենք, Ձերդ Գերազանցություն:

ԹԱԳԱՎՈՐ – Ոչինչ, հիմա կհանգստանաք:

(Տեղակալին): Կարգավորեք, որ ամեն ինչ բարձր մակարդակով լինի:

ԱԼՔԻՍԻԿՈՍ – Պետք չէ անհանգստանալ, Ձերդ Գերազանցություն:

ԹԱԳԱՎՈՐ – Դիրքս է պարտավորեցնում անհանգստանալ...
անհանգստանալ հպատակներիս համար:

2-րդ ԱՇԱԿԵՐՏ – Անհանգիստ պաշտոն ունեք, Ձերդ Գերազանցություն:

ԹԱԳԱՎՈՐ – Իսկ ի՞նչ էիր կարծում... Չէ՞ որ ես սրվակների հետ գործ չունեմ:

1-ին ԱՇԱԿԵՐՏ – Ձերդ Գերազանցություն, սրվակներն էլ պակաս փխրուն նյութից չեն:

ԹԱԳԱՎՈՐ – Հա, բայց մի բան է սրվակ կոտրելը, այլ բան՝ մարդու սիրտը կամ կյանքը:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Դուք բանաստեղծ եք, Ձերդ Գերազանցություն:

ԹԱԳԱՎՈՐ – Դե, մենք բոլորս էլ մի քիչ ցնդած ենք:

1-ին ԱՇԱԿԵՐՏ – Ձերդ գերազանցություն, իսկ Դուք ի՞նչ եք անում, երբ Ձեզ վերջապես հաջողվում է կոտրել մարդու սիրտը կամ կյանքը:

ԹԱԳԱՎՈՐ – *(Սկսում է նյարդայնանալ)* Բեկորներից խճանկար եմ հավաքում:

1-ին ԱՇԱԿԵՐՏ – Երևի, շա՞տ գեղեցիկ է:

ԹԱԳԱՎՈՐ – Հա, ես սիրում եմ այդ անել:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Ասացեք, Ձերդ Գերազանցություն...

ԹԱԳԱՎՈՐ – *(Կտրուկ)* Վերջ, հերիք է աշխատանքի մասին:

ԱԼՔԻՍԻԿՈՍ – Ձերդ Գերազանցություն, թույլ կտա՞ք:

ԹԱԳԱՎՈՐ – Իհարկե:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ես խմում եմ Ձեր կենացը: Ոչ թե որ իմ թագավորն ու հյուրն եք: Թեև ուրախ եմ, որ իմ թագավորն ու հյուրն եք: Մենք բոլորս շատ լավ գիտենք ու գնահատում ենք այն ամենը, ինչ անում եք Դուք մեզ համար՝ գիտության զարգացման համար: Չեմ ուզում երկարաբանել, ասեմ միայն, որ գիտությունն ու արվեստը միշտ իներտ են եղել, նրանք ի վիճակի չեն ինքնուրույն զարգանալ: Դրա համար ուժեղ ձեռք է պետք ու պիտի ասեմ, որ այդ ուժը մենք միշտ էլ զգում ենք: Գիտեմ, հաճախ ենք չարաշահել Ձեր համբերությունը, ներք մեզ, Ձերդ Գերազանցություն: Ես ցանկանում եմ, որ մենք ապրենք երկար, երկար ու մեռնենք նույն օրը: Որովհետև լավ չեմ պատկերացնում, թե ինչ պիտի անենք առանց Ձեզ:

ԹԱԳԱՎՈՐ – *(Յուզված է)* Շնորհակալ եմ, Ալքիմիկոս, բայց, կարծում եմ, դու չափազանցում ես...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ոչ, Ձերդ Գերազանցություն, ես անկեղծ էի խոսում:

ԹԱԳԱՎՈՐ – Շնորհակալ եմ, բարեկամս: Իսկ հիմա լսեք՝ ինչ եմ մտադիր անել այս առիթով: *(Ցույց է տալիս ոսկին):* Ձեռագրի տպագրությունը ինչ-որ չափով իմ պարտքն է: Ես ուզում եմ, որ դու և քո ընկերները իմանաք ինչ բարձր եմ գնահատում ձեր գործը: *(Տեղակալը ինչ-որ թղթեր է տալիս նրան):* Իմ հրամանով ձեր բրոնզե քանդակները կտեղադրվեն պալատական հրապարակում: Նոր ոսկուց կծուլվեն մեդալներ ձեր պատկերներով: Բնականաբար, ձեզ կշնորհվեն համապատասխան տիտղոսներ, կհանձնվեն թանկարժեք նվերներ: Եվ վերջում՝ լավագույն բանաստեղծներին պատվիրված է պոեմ գրել ձեր մասին:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ձերդ Գերազանցություն...

ԹԱԳԱՎՈՐ – Հավատացեք, բարեկամներ, սա չնչին բան է ձեր արածի դիմաց:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Բայց, Ձերդ Գերազանցություն...

ԹԱԳԱՎՈՐ – Վերջ տվեք: Հո չե՞մ կարող միայն ձեռքերդ սեղմել կամ ուսերիդ թփփացնել:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ձեռագրի տպագրությունը...

ԹԱԳԱՎՈՐ – Լավ, թեման փոխենք:

Դադար:

Թագավորը քայլում է լաբորատորիայում:

ԹԱԳԱՎՈՐ – *(Նկատելով պատին փակցված ինչ-որ գծագիր)* Իր պոչը խժռող վիշապ... դա ինչ է՞ր նշանակում:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Հետադարձ պրոցեսներ, Ձերդ Գերազանցություն:

ԹԱԳԱՎՈՐ – Այո, այո, հիշում եմ... Մեծ խորհրդանիշ է, ես կասեի՝ կյանքի

խորհրդանիշ:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Դուք սոված վիշա՞պը նկատի ունեք:

ԹԱԳԱՎՈՐ – Ես նկատի ունեմ ցանկացած պրոցեսի հետադարձությունը:
Այդ թվում՝ և կյանքի:

1-ին ԱՇԱԿԵՐՏ – Ձեր կարծիքով, կյանքը պրոցե՞ս է:

ԹԱԳԱՎՈՐ – Դուք՝ ալքիմիկոսներդ եք այդպես կարծում: Իսկ ինձ համար
կյանքը պետության հիմքն է: Կա կյանք, կա և պետություն:

1-ին ԱՇԱԿԵՐՏ – Հավանաբար, դա ընդամենը անհրաժեշտ պայման է:

ԹԱԳԱՎՈՐ – Անհրաժեշտ ու բավարար: Կարգուկանոնին ձգտումը, ինչը և
պետության հիմքն է, մեր մեջ գեներտիկորեն է ամրագրված: Կենդանի
օրգանիզմն ու քառսը անհամատեղելի են:

1-ին ԱՇԱԿԵՐՏ – Իսկ անարխիա՞ն:

ԹԱԳԱՎՈՐ – Անարխիան՝ շեղում է, հասարակության հիվանդություն: Թեև
կարելի է ուրիշ կերպ բնորոշել. անարխիան դա ընդամենը մի
վարչակարգը մյուսով փոխարինելու փորձ է: Ապրել, նշանակում է
ենթարկվել օրենքներին, և հակառակը: Օրենքով գալիս ենք
աշխարհ, օրենքով ապրում, օրենքով հեռանում: Ու բոլորին դա
բավարարում է, անգամ նրանց, ում չի բավարարում... Հուսով եմ,
ինձ կներեք հասարակագիտությանը նվիրված այս փոքրիկ
դասախոսության համար՝ դա իմ թուլությունն է. սիրում եմ փայլել
իմացությամբ:

(3-րդ աշակերտին): Անպայման ուզում ես ասել. «... որը չունեք»:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Ամենևին, Ձերդ Գերագանցություն:

ԹԱԳԱՎՈՐ – Դե, դե, ես լավ գիտեմ, ինչ եք մտածում իմ մասին:

ՏԵՂԱԿԱԼ – Ի դեպ, Ձերդ Գերագանցություն, գուցե բարեկարգե՞նք
լաբորատորիան: Բարելավենք, այսպես ասած, աշխատանքային
պայմանները:

ԹԱԳԱՎՈՐ – Ես արդեն մտածել եմ այդ մասին:

ՏԵՂԱԿԱԼ – Եվ ընդհանրապես ընդլայնենք ուսումնասիրությունների
շրջանակը, գիտական կենտրոն հիմնենք:

ԹԱԳԱՎՈՐ – Այո, արժե մտածել... Իսկ առայժմ կարող եք տեղափոխվել
պալատ: Այնտեղ հետազոտությունների և արտադրության բոլոր
պայմանները կստեղծվեն ձեզ համար:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ձերդ Գերագանցություն, եթե կարելի է, մենք դեռ այստեղ
մնանք:

ԹԱԳԱՎՈՐ – Հասկանում եմ, հաճելի հուշեր:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Պարզապես մի գործ պիտի ավարտին հասցնենք:

ԹԱԳԱՎՈՐ – Լավ, արա ինչպես հարմար ես գտնում: Ինձ հետաքրքրում է, ե՞րբ կսկսեք ոսկու սերիական արտադրությունը:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Կարծում եմ՝ երեք ամսից:

ԹԱԳԱՎՈՐ – Ուշ է: Տալիս եմ երեք շաբաթ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Երեք շաբաթ՞:

ՏԵՂԱԿԱԼ – Ձերդ Գերազանցություն, ո՞ւր ենք շտապում: Կարևորը՝ ոսկին արդեն ստացանք:

ԹԱԳԱՎՈՐ – Դու մոռանում ես, որ միայն մեր թագավորությունում չէ, որ զբաղված են այդ խնդրով:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ձերդ Գերազանցություն, մենք կանենք հնարավոր ամեն ինչ:

ԹԱԳԱՎՈՐ – Արեք, իսկ ես կվերցնեմ այս ձուլվածքները: Ուզում եմ պալատում գլուխ գովել: Ցտեսություն, Ալքիմիկոս:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ցտեսություն, Ձերդ Գերազանցություն:

*Դռան մոտ Թագավորին է մոտենում Հեքիաթասացը,
ինչ-որ թղթեր է ցույց տալիս:*

ՀԵՔԻԱԹԱՍԱՑ – Ձերդ Գերազանցություն, տեսեք ինչ եմ գտել: «Տրակտատ ճշմարիտ, անկրկնելի, մեծ և ունիվերսալ դեղի կամ հեղուկ ոսկու մասին»:

ԹԱԳԱՎՈՐ – Հեղուկ ոսկի... դա երկարակեցության հեղուկն է:

ՀԵՔԻԱԹԱՍԱՑ – Այո, բոլոր հիվանդությունների սպեղանին:

ԹԱԳԱՎՈՐ – Հետաքրքիր է...

Միասին դուրս են գնում:

**ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ
ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ**

Ալքիմիկոսի լաբորատորիան:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – (Դեպի դուռն ուղղվող Տեղակալին) Սպասիր մի րոպե:

ՏԵՂԱԿԱԼ – Հաճույքով:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – (Աշակերտներին) Սկսեք զտել սնդիկը, ես հետո կմոտենամ:

ՏԵՂԱԿԱԼ – Թույլ տուր մեկ անգամ էլ շնորհավորել քեզ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Չարժե:

ՏԵՂԱԿԱԼ – Էն էլ ո՞նց արժե, իմ ոսկեզօծ ընկեր:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Շռայլ ես այսօր:

ՏԵՂԱԿԱԼ – Ճիշտ է, շռայլ եմ: Իսկ դու կարծում ես, որ քո գյուտով միայն ոսկի՞ն արժեզրկեցիր:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ես չեմ մտածել դրա մասին:

ՏԵՂԱԿԱԼ – Իսկ ես մտածել եմ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դրա՞ համար ես այդքան ուշադիր:

ՏԵՂԱԿԱԼ – Ոչ, իհարկե, դա դաստիարակությունից է... Ընտանիք, դպրոց, շրջապատ: Մարդը պետք է կարողանա երջանկություն պարզել: Հիշո՞ւմ ես ինչպես էր «Աստվածաշնչում»՝ «Սիրիր մերձավորիդ»: Եվ հետո, ինչո՞ւ չհաճոյախոսես լավ մարդուն:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Լավ մարդը դա ե՞ս եմ:

ՏԵՂԱԿԱԼ – Առնվազն... երջանիկ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Երջանիկ... Իսկ կային ժամանակներ...

ՏԵՂԱԿԱԼ – Դա ուրիշ ժամանակներ էին:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Թե՞ ուրիշ հանգամանքներ:

ՏԵՂԱԿԱԼ – Կարելի է և այդպես:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Այսինքն՝ դաստիարակությունը կապ չունի: Դու հաճոյախոսում ես՝ ելնելով հանգամանքների՞ց:

ՏԵՂԱԿԱԼ – Քո կարծիքով, դա սխա՞լ է:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Այո, թեպետ վարվում եմ նույնպես:

ՏԵՂԱԿԱԼ – Տեսնո՞ւմ ես, և պետք չէ ընկճվել, դրա մեջ ոչ մի վատ բան չկա:
(Օղի է լցնում):

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Անկեղծ ասած, ես մի քիչ ուրիշ կարծիք ունեմ:

ՏԵՂԱԿԱԼ – Շատ իզուր: Հանգամանքները պատմության շարժիչ ուժն են:
(Տալիս է բաժակը):
Նրանք էին, որ Եզովպոսին դարձրին ստրուկ, իսկ Ալեքսանդրին՝
Մակեդոնացի:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Իսկ հնարավոր չէ՞ ավելի պարզ:

ՏԵՂԱԿԱԼ – Լավ, կբերեն ավելի պարզ օրինակ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Հանգամանքների մասի՞ն:

ՏԵՂԱԿԱԼ – Այո, բայց կրկնում են, պետք չէ բարձրից վերաբերվել դրան:
Հանգամանքներն ինձ դարձրին պալատական, քեզ՝ ալքիմիկոս, իսկ նրան՝ Թագավոր: Հանգամանքներն այդպես դասավորվեցին. նրա հայրը թագավոր էր, հասկանո՞ւմ ես:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ընդհանուր առմամբ՝ այո...

ՏԵՂԱԿԱԼ – Բավական՞ է:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Չէ, ինչո՞ւ, դու շատ հետաքրքիր ես խոսում:

ՏԵՂԱԿԱԼ – Դա միայն թվում է, թե մենք ենք տնօրինում մեր կյանքը:
Իրականում մենք ընդամենը ավարտին ենք հասցնում այն խղճուկ ներկայացումը, որտեղ բոլոր դերերը Նորին մեծություն Պատահնունքն է բաշխել: Հերոս, վախկոտ, հանճար կամ ընդհակառակը՝ ապուշ, մարդկային կատեգորիաներ չեն, այլ միայն «բառեր, բառեր, բառեր...»: Մի խոսքով, այդ ամենը հիմարություն է: Ոչ մի նման բան կյանքում չկա:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Իսկ ի՞նչ կա:

ՏԵՂԱԿԱԼ – Հանգամանքներ: Դրանք են մեզանից ստեղծում թագավորներին, պոռնիկներին, նախարարներին, գողերին, մարդասպաններին... Իհարկե, ես չեմ բացառում տաղանդը, նույնիսկ՝ հանճարը: Կամ, օրինակ, բնածին թեթևատությունը, ես այս ամենը չեմ բացառում, ո՛չ, ես պարզապես առավելությունը տալիս եմ հանգամանքներին: *(Բաժակները խփում են իրար և խմում են):* Կարո՞ղ եմ ծխել:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Այո, իհարկե:

ՏԵՂԱԿԱԼ – *(Ծխում է)* Լավ ստացվեց ու կարևորը՝ ժամանակին:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Այսի՞նքն:

ՏԵՂԱԿԱԼ – Շեֆը ոնց որ թե պատրաստվում էր փակել ձեր այս լաբորատորիան:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Հետաքրքիր է: Եվ ո՞նց էր դա անելու:

ՏԵՂԱԿԱԼ – Քեզ մանրամասներն են հետաքրքրում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ասենք թե...

ՏԵՂԱԿԱԼ – Դե, կարգելեր զբաղվել գիտությամբ, և դա՛ լավագույն դեպքում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Իսկ վատագո՞ւյն...

ՏԵՂԱԿԱԼ – Ինչու այդքանը քեզ բավական չէ՞... Ո՞ւր էիր գնալու: Դու արդեն երիտասարդ չես: Նոր բան գրոյից սկսելը՝ խելահեղություն է ու անհնար: Իսկ ինչ վերաբերում է վատագույնին, հավատա, նա հնարը կգտներ՝ ոնց քեզ երջանկացնի: Բայց դա հիմա կարևոր չի:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ինչո՞ւ:

ՏԵՂԱԿԱԼ – Ո՞նց թե ինչու. չէ՞ որ դու հաղթեցիր Գոլիաֆին:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Այո, բայց, այնուամենայնիվ, ինձ հետաքրքիր է, ինչպե՞ս նա կարգել էր ինձ զբաղվել գիտությամբ:

ՏԵՂԱԿԱԼ – Դե, կվերցներ տարածքը և կվերասարքավորեր այն զորանոցի կամ թատրոն կբացեր:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Նա չէր կարող դա անել:

ՏԵՂԱԿԱԼ – Հետաքրքիր է՝ ինչո՞ւ: Կարծում ես, խի՞ղճը նրան թույլ չէր տա:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ե՛ս նրան թույլ չէի տա:

ՏԵՂԱԿԱԼ – Այո՞... ոսկին իրավ փոխում է մարդուն: Դարձնում է համարձակ ու հիմար՝ միաժամանակ, որը, ի միջի այլոց, նույն բանն է... Թույլ տուր հարցնել. ինչպե՞ս թույլ չէիր տա:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Հանգիստ)* Ես կպայթեցնեի այս շենքը:

ՏԵՂԱԿԱԼ – Պարզ է...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Իսկ նրա համար փոքրիկ դժբախտ պատահար կկազմակերպեի:

ՏԵՂԱԿԱԼ – Իսկ ինչո՞ւ փոքր:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Մեծը որոշ բարդությունների հետ է կապված...

ՏԵՂԱԿԱԼ – Վախենում ես չհաղթահարե՞ս:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Այո...

ՏԵՂԱԿԱԼ – Դե, այդ դեպքում, իհարկե, իմաստ ունի բավարարվել ընդամենը փոքր պատահարով:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Կարծում ես՝ կատակո՞ւմ եմ:

ՏԵՂԱԿԱԼ – Հուսով եմ, կատակում ես, հուսով եմ, որ դու այնքան էլ անհույս ապուշ չես, որ այդպես մտածես:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Կարծում եմ, թագավորն էլ այնքան ապուշ չէ, որ այդպես

մտածի:

ՏԵՂԱԿԱԼ – Դու ի՞նչը նկատի ունես:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ձորանոցը, թատրոնը...

ՏԵՂԱԿԱԼ – Լավ հիշիր. բացելն է դժվար, դրա համար անհրաժեշտ է, որ որևէ մեկն օգնի թագավորին: Իսկ փակել ինքն էլ կարող է, առանց մեկի օգնության, արագ ու մեծ հաճույքով, չես հասցնի կյանքից հիասթափվել:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Բայց...

ՏԵՂԱԿԱԼ – Դու ուզում ես ասել՝ հասարակական կարծիք և նման էժանագին հիմարություններ: Դե, կաղմկեն, կաղմկեն ու կմոռանան, ոչինչ չես կարող անել. դա արդեն կենսաբանություն է... Եվ հետո...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ի՞նչ հետո...

ՏԵՂԱԿԱԼ – Դու նման չես ահաբեկիչի:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ի՞նչ նշանակություն ունի, չէ՞ որ կարևորը հանգամանքներն են: Մնացածը մանրուք է: Գի՞շտ քեզ հասկացա:

ՏԵՂԱԿԱԼ – Այո, միայն թե այս դեպքում հանգամանքներ չկան:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – (*Շփոթված*) Ես հենց այնպես, «եթե»-ի իմաստով:

ՏԵՂԱԿԱԼ – Այ, երբ կլինի այդ «եթե»-ն, այն ժամանակ էլ հարցերդ կլուծենք: Իսկ հիմա ուրախանալ է պետք, իմ ոսկե բարեկամ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – (*Տխուր*) Դե, ես ուրախանում եմ:

ՏԵՂԱԿԱԼ – Ինչ-որ դուրս չես գալիս:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Կենսաբանությունից ես խոսում և չգիտես, որ միասեռ արարածները միմյանց դուր չեն գալիս:

ՏԵՂԱԿԱԼ – Ի դեպ, այդ մասին...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – (*Անզոր ասելու պես*) Դեռ չեմ ամուսնացել, չստացվեց... Միտք ունեմ: Լավ է ուշ, քան երբեք: Շնորհակալություն:

ՏԵՂԱԿԱԼ – (*Ծիծաղելով*) Ի՞նքդ ես ձևակերպել:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ի՞նչը:

ՏԵՂԱԿԱԼ – Հոգու ճիչը:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Չէ՛, բարի մարդիկ օգնեցին:

ՏԵՂԱԿԱԼ – Ավելի լավ կլիներ, որ նրանք քեզ հարսնացու գտնեին:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ի՞նչն է քեզ այդքան անհանգստացնում:

ՏԵՂԱԿԱԼ – Ուզում եմ, որ ամուսնանաս:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Քե՞զ ինչ:

ՏԵՂԱԿԱԼ – Մե՞նակ վախենալու է:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դու ինչ է՝ որոշե՞լ ես:

ՏԵՂԱԿԱԼ – Այո՛:

Դադար:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դե ինչ, մեզանից յուրաքանչյուրը կյանքում գոնե մեկ անգամ պիտի ազնիվ տղամարդու նման վարվի: Շնորհավորում եմ:

ՏԵՂԱԿԱԼ – Շնորհակալ եմ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Չի բացառվում նույնիսկ, որ զոհը, այսինքն՝ ընկերուհին էլ արդեն կա՞:

ՏԵՂԱԿԱԼ – Այո, ու գիտե՞ս ով է:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Չասես: Թող դա քո փոքրիկ գաղտնիքը լինի:

ՏԵՂԱԿԱԼ – Ի՞նչ գաղտնիք... Պարզապես...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Պետք չէ, ես սիրում եմ անակնկալներ:

ՏԵՂԱԿԱԼ – Լավ, համոզեցիր: Ի դեպ, մենք պատրաստվում ենք դա նշել նեղ շրջանակում, կարող ենք միաժամանակ այս փաստն էլ տոնել: Հուսամ՝ պատիվ կանես քո ներկայությամբ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Մի օրում երկու տոնը չափազանց շատ է ինձ համար:

ՏԵՂԱԿԱԼ – Տեսնում եմ՝ ծերությունդ ուրախ չի անցնում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դեմ՝ հասունությունս, բայց տարբերություն չկա:

ՏԵՂԱԿԱԼ – Դա վատ է: Ինչ-որ բան պետք է ծերությանը թողնել:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Այո, իսկապես, ես չմտածեցի դրա մասին...

ՏԵՂԱԿԱԼ – Դե, դու մտածիր, իսկ ես գնամ: (*Պատրաստվում է դուրս գալ*):

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Սպասիր, ես մի խնդրանք ունեմ:

ՏԵՂԱԿԱԼ – Հա, մոռացա... լսում եմ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դու չե՞ս կարող արագացնել գրքի տպագրությունը:

ՏԵՂԱԿԱԼ – Վախենամ՝ ոչ: Լավագույն դեպքում՝ մեկ ամսում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Իսկ գուցե... ինչ-որ կերպ հնարավոր է:

ՏԵՂԱԿԱԼ – Տեխնիկայես անհնար է, դա բավական բարդ պրոցես է, որը կախված է բազմաթիվ գործողությունների հետ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Հասկանո՞ւմ ես, դա շատ կարևոր է... ինձ համար, մեր բոլորի համար...

ՏԵՂԱԿԱԼ – Հասկանում եմ, կանեմ՝ ինչ հնարավոր է:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Շնորհակալ եմ:

Տեղակալը հեռանում է լաբորատորիայից:

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Ալքիմիկոսի լաբորատորիան:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դե ինչ, խոսենք:

2-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Եկե՛ք:

Դադար:

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Լավ եղանակ է...

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Ի՞նչ:

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Ասում եմ՝ լավ եղանակ է, արև...

2-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Միայն թե քամին...

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Ի՞նչ՝ քամին...

2-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Ուրիշ կողմ է փչում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ասածդ, որքան հասկացա, երկրորդ իմաստն էլ ունի:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Ոչինչ էլ հասկանալ պետք չի. մարդն աշխարհագրությունից բան չի հասկանում:

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Միայն աշխարհագրությունի՞ց:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Միանշանակ:

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Դե, դա այդքան էլ սարսափելի չէ:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Դու համոզված ես:

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Հա, հարևանս էլ աշխարհագրությունից բան չէր հասկանում, ամբողջ կյանքում Արևի ճամփան էր փնտրում: Չգիտեր, որ բոլոր ճանապարհները Հռոմ են տանում:

2-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Ի՞նքո՞ւ հնարեցիր:

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Չէ, արևելյան իմաստություն է:

Դադար:

2-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Ահա և խոսեցինք:

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Չգիտեմ՝ դուք ինչպես, իսկ ինձ թագավորը դուր եկավ: Բարի էր ու զգայուն:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Ինչքան հիշում եմ, անցյալ անգամ դու նրա մասին մի փոքր ուրիշ կարծիք ունեիր:

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Դրա համար պատճառներ կային, եթե հիշում ես... Եվ հետո՝ նրան կարելի է հասկանալ:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Կարելի է, բայց պետք չէ:

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Ինչո՞ւ:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Ուժեղները դա չեն սիրում:

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Նա ի՞նչ ուժեղ է որ...

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Կդառնա: Հենց որ ոսկին ստանանք՝ կդառնա:

2-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Մեր տրամադրության տակ այնքան էլ շատ ժամանակ չի մնացել:

Դադար:

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Շեֆ, ի՞նչ ես կարծում, կհասցնե՞նք:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Անկեղծ ասած, ես երկու-երեք ամսվա հույս ունեի:

2-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Հիմա, լավագույն դեպքում, մեկ ամիս: Այն էլ, եթե «ոսկին» չոր տեղում պահվի:

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Դժվար խնդիր է:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Ինչո՞ւ է դժվար:

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Թագուհին միանգամից կխորտակի այն երջանկության արցունքների մեջ:

2-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Նա կին է, նրան կարելի է հասկանալ:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Նա կին է, հետևաբար, դա անել անհիմաստ է:

2-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Ուրեմն, մնաց ընդամենը երեք շաբաթ:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Կհասցնե՞նք:

Բոլորը նայում են Ալքիմիկոսին:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Ինչ-որ թղթեր է ցույց տալիս)* Չիմա մենք գիտենք, որ ծծումբը մետաղների հայրն է, իսկ սնդիկը՝ մայրը: Միայն ծծումբը չի կարող բեղմնավորել, նույնը՝ սնդիկը: Այստեղ էր մեր սխալը: Չիմա նայեք... *(Ինչ-որ բան է գծում):* Դրա համար մեզ պետք է ընդամենը երկու շաբաթ...

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – *(Անվստահ)* Ուրեմն՝ կեցցե՛:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ես դեմ չեմ:

Տիրում է համընդհանուր ոգևորություն:

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Դուրս բերեք ապակեղենը, սեղանները պատրաստեք: Ես գնում եմ երաժիշտների ետևից:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ի՞նչ է պատահել, ես ոչ մի նոր բան չասացի: Երկու օր առաջ մենք միասին էինք հանգել այս նույն եզրակացությանը:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Մեզ շփոթության մեջ գցեց ժամկետը երկարացնելու քո խնդրանքը թագավորին:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Երկու ամիսը:

2-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Այո:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ես ուզում էի հետաձգել այդ իրադարձությունը:

2-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Ինչո՞ւ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Աղմուկ չեմ սիրում:

2-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Միայն ա՞յդ պատճառով:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Քի՞չ է: Թագավորը կաշխատի ուռճացնել այս իրադարձությունը: Նրան հերոսներ են պետք: Նրանց հիմա չի բավարարի միայն ուժեղ լինելը: Նրանք կուզեն նաև արդարամիտ երևալ: Իսկ դրա համար Նորին Գերազանցությունը ինչ-որ բան պիտի անի:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Ի՞նչ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դե, գտնի համապատասխան զոհերի...

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Ուզում ես ասել՝ հերոսների՞:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ուզում եմ ասել՝ զոհերի: Քսի տալ նկարիչներին, բանաստեղծներին, կազմակերպի շքերթներ, տոնակատարություններ, հրավառություն...

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Ես կարծում եմ, դա այնքան էլ վատ չէ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Սկզբում դա իրո՞ք հաճելի է, հետո ձանձրացնում է, իսկ վերջում ամենասարսափելին այն է, որ սկսում ես վարժվել դրան:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Ինչի՞ն:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ուշադրությամբ՝ բոլորը քեզ ճանաչում են, հրավիրում են ամեն տեղ, խոնարհվում են քո առջև...

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Շե՛ֆ, չեմ հասկանում, ինչն՞ է դա սարսափելի:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Որովհետև ժամանակավոր է... և ինչ-որ պահի ամեն ինչ ավարտվում է: Պարզապես ինչ-որ մեկը հայտնագործում է, օրինակ, երիտասարդության էլիքսիրը՝ հեղուկ ոսկին:

2-րդ ԱՇԱԿԵՐՏ – Ե՞վ...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Եվ արդեն քեզ չեն ճանաչում, չեն խոնարհվում, ոչ մի տեղ չեն հրավիրում: Դու էլի նույն ոչինչն ես: Շատ դժվար է «դարձը ի շրջանս յուր»:

Դադար:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Իսկ ես ուզում եմ, որ լավագույն բանաստեղծներն ինձ պոեմներ նվիրեն, իսկ աղջկական նուրբ մատները դափնեպսակ դնեն իմ գլխին:

1-ին ԱՇԱԿԵՐՏ – Լավ մարդիկ դափնե պսակին գերադասում են փշե պսակը:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Ես կարծում էի, դա ընդամենը ճաշակի խնդիր է: Լսե՛ք, իսկ մեզ ինչպե՞ս են դրոշմելու՝ երեսի՞ց, թե կիսադեմ:

2-րդ ԱՇԱԿԵՐՏ – Ի՞նչ տարբերություն:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Բանը նրանում է, որ երեսակողմս հունական է, իսկ կիսադեմս՝ հռոմեական:

2-րդ ԱՇԱԿԵՐՏ – Կիսադեմդ հունական է:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Հռոմեական:

2-րդ ԱՇԱԿԵՐՏ – Այդ դեպքում ավելի լավ է՝ ծոծրակից:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – *(1-ին աշակերտին)* Իսկ դո՞ւ սրա վերաբերյալ ինչ ես մտածում:

1-ին ԱՇԱԿԵՐՏ – Շատ բան: Ափսոս, բարձրաձայն դա չես ասի, հետևաբար, ավելի լավ է խոսենք քո կիսանդրիի մասին:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Դե ինչ, եկեք խոսենք:

1-ին ԱՇԱԿԵՐՏ – Եվ ինչպե՞ս է ձեզ դուր գալիս այն հրապարակում բարձրացնելու մտահղացումը:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Կարծում եմ, որ դրա մեջ ինչ-որ բան կա:

2-րդ ԱՇԱԿԵՐՏ – Օրինակ՝ ի՞նչ:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Ողջ կյանքս երազել եմ կողքից ինձ նայել:

1-ին ԱՇԱԿԵՐՏ – Չե՞ս վախենում:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Ինչի՞ց:

1-ին ԱՇԱԿԵՐՏ – Հիասթափվելուց:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Այդ ինչն՞ է հանկարծ:

2-րդ ԱՇԱԿԵՐՏ – Դե՛ երեսկողմդ հռոմեական է, կիսադեմդ՝ հունական:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Հռոմեական:

2-րդ ԱՇԱԿԵՐՏ – Այդ դեպքում՝ հարց չկա...

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Գիմի չի՞ մնացել:

Աշակերտներից մեկը նոր շիշ է բերում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Իսկ ո՞վ պիտի աշխատի:

2-րդ ԱՇԱԿԵՐՏ – Շեֆ, այսօր ի՞նչ աշխատանք:

1-ին ԱՇԱԿԵՐՏ – Եվ հետո՞ ուշ է:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ես էլ եմ ասում՝ ուշ է: *(Ցույց է տալիս օրացույցը):*

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Շեֆ...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ի՞նչ:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Բայց դու մեկ-մեկ այնքա՞ն տաղտուկ ես դառնում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(ժպտալով)* Լա՛վ, սատանան ձեզ հետ:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Ի միջի այլոց, կարող էիր ասել և. «Աստված ձեզ հետ»:

(Գիճի է լցնում): Իսկ ի՞նչ կենաց ասացիր՝ «...ես ցանկանում եմ, որ ապրենք երկար, երկար ու մեռնենք նույն օրը»: Պատկերացնում եմ, ի՞նչ տոն կլինի դժոխքում:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Իսկ ինձ դուր եկավ ամուր ձեռքի ու գիտության մեջ այդ ձեռքի ունեցած ներդրումի հատվածը...

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Շեֆ, ինչի՞դ էր պետք այս կրկեսը:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Հասկան՞ում եք, մեր կյանքում միայն պոետները գիտեն «ինչն է լավ և ինչն է վատ» ու համապատասխան կերպով վարվում են իրենց գրքերում: Իսկ ինչ վերաբերում է իրականությանը, այն զուտ փոխզիջումներից է կազմված, ու գաղտնիքը կայանում է նրանում, որ չխաբվես ամենագլխավոր հարցում: Այստեղից էլ՝ այդ կենացն ու էլի շատ ուրիշ բաներ:

Խնում են: 2-րդ աշակերտը կիթառ է նվագում ու երգում:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Ծանոթ երգ է:

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Առաջարկում եմ հոտնկայս հարգենք մեր շարքերից անժամանակ հեռացած ընկերոջ հիշատակը...

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Ավելի ճիշտ՝ աշխատակցի...

2-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Իսկ միգուցե, այնուամենայնիվ, ընկերո՞ջ:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Ո՛չ:

2-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Մի՞թե դա այդքան կարևոր է:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Ես ճշգրտություն եմ սիրում:

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Տեսա՞ք, տարվեցինք ու մոռացանք կանգնել:

Ալքիմիկոսը գնում է բեմի խորքը, զանգում է:

2-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Բոլոր դեպքերում, ափսոս, որ նա գնաց:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – «Ափսոս» որ ասում ես, մե՞զ նկատի ունես, թե նրան:

2-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Առաջ ես չէի նկատում քո այդ սերը ճշգրտության նկատմամբ:

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Ասում եմ, նա հիմա սեփական լաբորատորիա ունի... Շեֆ, լսո՞ւմ ես:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ուրախ եմ նրա համար:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Ահա թե ինչու գնաց... Իսկ ի՞նչ գեղեցիկ էր խոսում ամպերի մասին:

2-րԴ ԱՇԱԿԵՐՏ – Հա, գնաց, գնաց, որ բացի սեփական լաբորատորիան, անցկացնի իր փորձերը: Ի՞նչ վատ բան կա սրա մեջ...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Շարունակելով համար հավաքել)* Գնաց, ուրեմն չպիտի գար: Նա գնաց ոչ այն բանի համար, որ այստեղ վատ էր: Նա եկել էր գնալու համար: Դրա մեջ աղտ կա: Մարդկային արատներից ամենավատը երկերեսանությունն է:

3-րԴ ԱՇԱԿԵՐՏ – Երկերեսանությունը:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Այո՛:

3-րԴ ԱՇԱԿԵՐՏ – Այդ դեպքում ի՞նչ անել Աստծո հետ: Չէ՞ որ նա երեքերեսանի է:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ես մտածել եմ դրա մասին, բայց հետո որոշեցի...

3-րԴ ԱՇԱԿԵՐՏ – Ի՞նչ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Որ վերևներում երևի գիտեն ինչ են անում:

2-րԴ ԱՇԱԿԵՐՏ – Վաղուց ուզում էի հարցնել...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Չեմ հասկանում, մի՞թե զրույցի ուրիշ նյութ չկա:

2-րԴ ԱՇԱԿԵՐՏ – Կա, իհարկե, բայց, այնուամենայնիվ, ինձ հետաքրքիր է, ինչո՞ւ են գնում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Չգիտեմ, ես նրանց դատավորը չեմ և իրենց փաստաբանների կարիքը չունեմ:

2-րԴ ԱՇԱԿԵՐՏ – Ամեն անգամ, երբ խոսում ենք այս մասին, դու ջղայնանում ես:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Չեմ սիրում խոսել մի բանի մասին, ինչ չկա:

2-րԴ ԱՇԱԿԵՐՏ – Ինչ-որ նախնադարյան կարգեր են... Ամեն գնացողի վրա տաբու է դրվում, ոնց որ Ֆիջի կղզիների վայրենիները լինենք: Սենք իրավունք չունենք խոսել, հանդիպել նրանց հետ, անգամ մտածել նրանց մասին:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Բայց, այնուամենայնիվ, դուք խոսում, հանդիպում և, իհարկե, մտածում եք նրանց մասին:

2-րԴ ԱՇԱԿԵՐՏ – Բնական է, պետք է չէ՞ մենք ինչ-որ բանով տարբերվենք Խաղաղ օվկիանոսի պապուասներից:

3-րԴ ԱՇԱԿԵՐՏ – Իսկապես, շեֆ, քեզ չի՞ թվում, որ այսպիսի դիրքորոշումը ինչ-որ տեղ հակասում է փոխզիջումների քո հենց նոր մեր առջև ծավալված հետաքրքիր և, ամենակարևորը, կենսական տեսությամբ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ոչ, չի թվում... Վերջերս այդ զբոսաշրջիկներից մեկը

պատմում էր մի խումբ կարեկցողներին, թե ինչպես իրենց ոսկորների վրա կառուցվել է այս լաբորատորիան:

2-րդ ԱՇԱԿԵՐՏ – Բայց չէ՞ որ նրանք շատ բան են արել:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Այո, բայց շատ բան էլ տարել են... Եվ ընդհանրապես ես չեմ սիրում, երբ առևտուր են անում՝ ով ինչ է արել ու ինչ պիտի դրա համար ստանա:

2-րդ ԱՇԱԿԵՐՏ – Լավ, շեֆ, անցած լինի... Իսկ ի՞նչ կարծիք ունես պալատ տեղափոխվելու վերաբերյալ: Քիչ առաջ դու ինչ-որ բան ասացիր դրա մասին:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Դա թագավորն ասաց:

2-րդ ԱՇԱԿԵՐՏ – Տեսնում եմ, դու էլ ես ճշգրտություն սիրում:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Պարզապես ինձ համար շեֆն է թագավոր և՛ ընդհակառակը... Ոնց որ թե ես նորից հիմարություն դուրս տվեցի:

2-րդ ԱՇԱԿԵՐՏ – Մի՛ անհանգստացիր, ոչ ոք չնկատեց:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Ինչո՞ւ:

2-րդ ԱՇԱԿԵՐՏ – Քեզ ոչ ոք չէր լսում...
(Ալքիմիկոսին): Դե, ի՞նչ ես մտածում պալատի վերաբերյալ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ավելորդ գլխացավանք է:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Հա, բայց փոխարենը կապրենք թագուհու հետ:

1-ին ԱՇԱԿԵՐՏ – Լսի՛ր...

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Ես նկատի ունեմ՝ պալատում:

1-ին ԱՇԱԿԵՐՏ – Արքունական տանը:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Ես կեղծամ կպատվիրեմ ու կսովորեմ ծնկածալ խոնարիվել: (Փորձում է խոնարհումներ անել):

1-ին ԱՇԱԿԵՐՏ – Այ այդ մեկը հաստատ անել պետք չէ:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Ինչո՞ւ:

1-ին ԱՇԱԿԵՐՏ – Հանկարծ ու թագուհուց լավ ստացվի:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – (Զի լսում նրան) Համաձայնվեք, լավ է հնչում՝ «Թագավորական գիտական կենտրոն»:

1-ին ԱՇԱԿԵՐՏ – (Անվստահ) Սատանան գիտի... Դրա մեջ ինչ-որ բան կա:

3-րդ ԱՇԱԿԵՐՏ – Ինչ-որ բա՞ն, շուրջդ նայիր... Մեր լաբորատորիայում

կարելի է միայն ջուր եռացնել, այն էլ՝ կյանքի վտանգի ենթարկելով:
Ոչ մի լուրջ սարք չունենք:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Մոտենում է նրանց)* Մենք մնում ենք...

2-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Ի՞նչ...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ես ասացի՝ մենք մնում ենք:

2-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Սա խնդրի լուծման ոչ պետական մոտեցում է:

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Նա իրավացի է... Եվ հետո, մենք ի՞նչ ենք կորցնում: Իսկ այնտեղ պայմաններ են ստեղծված, վերջապես, թափ կա...
(Նկատելով Ալքիմիկոսի պառկածը): Լավ, թող քո ասածը լինի, թեև, իմ կարծիքով, դա ոչ այլ ինչ է, քան պաշտոնական դիրքի չարաշահում...

Դադար: Ալքիմիկոսը գինի է խմում:

2-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Իսկ ի՞նչ ասաց էն տիպը...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ո՞րը:

2-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Դե, որ միշտ Թագավորի հետ է գալիս:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Մենք միասին ենք սովորել:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Սովորել եք միասին, բայց նա որոշ բաներ ավելի լավ է յուրացրել:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ինչի՞ց վերցրեցիր:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Աչքերից է երևում՝ շատ բան գիտի, շատ բան կարող է:
Հաջողակ ընկեր է:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դու սխալվում ես:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Որովհետև այս ամենը չասացի նրա երեսին:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Հավատա ինձ, նա վատ տղա չէ:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Չգիտեմ...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Առավել ևս՝ դուք ինձ պետք է հավատաք:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Եթե գաղտնիք չէ, ինչի՞ մասին էիք խոսում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Գաղտնիք չէ: Նա ամուսնանում է և հրավիրում էր ինձ...
բոլորիդ:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Պարզ է...

2-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Իսկ դու գիտե՞ս՝ ով է հարսնացուն:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Կտրուկ)* Ո՛չ:

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – *(Զգուշավոր)* Չենց այդ մասին էլ ուզում էինք խոսել քեզ հետ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Այդ մասին պետք է խոսել:

2-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Ինչո՞ւ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Կան հարցեր, որոնք մեզ չեն վերաբերում:

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Դու պարզապես չգիտես, թե ում մասին է խոսքը:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Գիտեմ:

2-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Չգիտե՛ս: Եվ ընդհանրապես ես կարծում եմ, որ դու իրավացի չես:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դու ավելի լավ է երգիր, քեզ մոտ դա լավ է ստացվում:
(Վերցնում է դատարկ շիշը): Ինչ է, գինի չմնա՞ց: Դրա համար ձեզ կախելն էլ քիչ է: *(Մոտենում է հեռախոսին, համար հավաքում):*

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Օ՛, ղեկավարներ՝, որքան անարդարացի եք դուք այս կյանքում...

2-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Ի՞նքո՞ հորինեցիր:

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Չէ՛, արևելյան իմաստություն է:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Ես վաղուց ուզում էի քեզ հարցնել, ի՞նչն է քեզ կապում Արևելքի հետ:

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Կանա՛յք:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Կանա՞՛յք:

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Հա, եթե նրանք չլինեին, ես վաղուց Տիբեթում միրվանա կընդունեի:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Որպես ազնիվ տղամարդ, չե՞ս կարող թողնել նրանց:

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Ես կմեռնեմ առանց նրանց:

2-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Ժամանակին սագերը փրկեցին
Չռոնը բարբարոսներից, հիմա կանայք փրկում են Արևելքը քեզնից:

Դադար:

Բոլորը նայում են Ալքիմիկոսին, ով անարդյունք պտտում է հեռախոսի սկավառակը:

2-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Ձեզ չի՞ թվում, որ մենք արդեն հիմարություններ ենք դուրս տալիս:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – *(Նայելով ժամացույցին)* Արդեն կես ժամից ավելի է:

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Ի՞նչ առաջարկներ կան:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Համարենք, որ երեկոն անցավ ջերմ, բարեկամական մթնոլորտում:

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Շարունակի՛ր:

2-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Բարձրաստիճան պայմանավորվող կողմերը հույս հայտնեցին...

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Ստո՛պ: «Հույս հայտնեցին»՝ ավելի լավ հաստատ չես ասի, ուստի թույլ տվեք երեկոն հայտարարել փակված: Առարկություններ կա՞ն:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Չկան:

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Ուրեմն, խնդրում եմ լքել տարածքը: Դուրս ենք գալիս մեկ-մեկ:

2-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Էդ ինչի՞:

3-ՐԴ ԱՇԱԿԵՐՏ – Ուսումնական տազմապ: Մշակում ենք խանդավառ երկրպագուներից գլուխ ազատելու մարտավարությունն ու ռազմավարությունը:

Բացի 1-ին աշակերտից ու Ալքիմիկոսից, բոլորը գնում են:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Դու մնո՞ւմ ես:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Հա:

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Եթե պետք է...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Չէ, ես դեռ մի քիչ գործեր ունեմ...

1-ԻՆ ԱՇԱԿԵՐՏ – Հասկանում եմ...

*1-ին աշակերտը գնում է:
Ներս է մտնում Հեքիաթասացը:*

ՀԵՔԻԱԹԱՍԱՑ – Լավ է, որ քեզ հանդիպեցի:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Բա՞ն է պատահել:

ՀԵՔԻԱԹԱՍԱՑ – Հա: Արագ կրկնիր ինձ հետ. «Ես սրբազան գաղտնիքների ծառան եմ ու պետք է ենթարկվեմ աննկարագրելի տանջանքների...»:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ինչո՞ւ:

ՋԵՔԻԱԹԱՍԱՑ – Կրկնիր. «Ես սրբազան գաղտնիքների ծառան եմ ու պիտի ենթարկվեմ աննկարագրելի տառապանքների... Այս երեկո կգա մեկը, ով սրախողխող կանի ինձ: Նա կհանի գանգամաշկա, միսս ու ոսկորս կխառնի իրար ու կզցի կրակը: Այդ ժամ կհասկանամ, որ դառնում եմ ոգի...»:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Սա ի՞նչ հիմարություն է:

ՋԵՔԻԱԹԱՍԱՑ – Դու այդպե՞ս ես կարծում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ներիր, ես հիմա զբաղված եմ:

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՉՈՐՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Ալքիմիկոսի լաբորատորիան:

Ալքիմիկոսը պատռում է պատերին կախված գծագրերը, դիագրամները:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Տրանսի մեջ)* Ես սրբազան գաղտնիքների ծառան եմ ու պիտի ենթարկվեմ աննկարագրելի տառապանքների... Այս երեկո կգա մեկը, ով սրախողխող կանի ինձ: Նա կհանի գանգամաշկա, միսս ու ոսկորս կխառնի իրար ու կզցի կրակը: Այդ ժամ կհասկանամ, որ դառնում եմ ոգի...
(Անուժ ընկնում է հատակին):

Բեմի խորքում հայտնվում է Նեն:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Լավ է, որ եկար:

ՆԵ – Մի անհանգստացիր, ես շուտով կգնամ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ի՞նչ է նշանակում «շուտով կգնամ»... Առանց այդ էլ մենք միայն տոն օրերի ենք հանդիպում:

ՆԵ – Ուրեմն այսօր տո՞ն է:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Իհարկե:

ՆԵ – Եվ ի՞նչ ենք անելու...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Շախմատ ենք խաղալու: Գիտես, մենք միասին երբեք չախմատ չենք խաղացել:

ՆԵ – Շախմատ...:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Հա, ես մտածեցի, որ մեր հարաբերությունների մեջ պետք է նորություն մտցնել:

ՆԵ – Եվ այդ նորությունը, քո կարծիքով, շախմատն է:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Այո, իսկ ինչ է, դու կարող ես ուրի՞շ բան առաջարկել:

Նեն դանդաղ մոտենում, նստում է կողքը:

ՆԵ – Երևի թե՛ ոչ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դե, ուրեմն...

ՆԵ – Ես ուզում էի խոսել քեզ հետ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Լսում եմ:

ՆԵ – *(Անվստահ)* Չգիտեմ, տեսնո՞ւմ ես, թե ոչ...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Փորձում է հետաձգել խոսակցությունը)* Տեսնում եմ, իհարկե տեսնում եմ, ավելի ճիշտ՝ չեմ տեսնում... Վերջերս ինձ մոտ անընդհատ տեսիլքներ են հայտնվում...

ՆԵ – Տեսիլքներ՞...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Շատ ոգևորված)* Հա, չգիտեմ ինչ է կատարվում ինձ հետ. բացում եմ աչքերս և երկու Արև եմ տեսնում: Պատկերացնո՞ւմ ես՝ մեկը մեծ ու այրող, ինչպես...

ՆԵ – *(Տխուր)* Ինչպես ի՞նչ...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Իբր շփոթված)* Չգիտեմ, գուցե... ինչպես սե՞րը:

ՆԵ – Իսկ մյո՞ւսը:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ի՞նչ մյուսը. դու նկատի ունես այն փոքրն ու նարնջագո՞ւյնը... Ես այն համարյա չեմ նկատում: Բայց դա դեռ ամենը չէ: Պարզվում է, ինձ մոտ վեհության մոլուցք էլ կա: Ինձ թվում է... ոչ, ես համարյա համոզված եմ, որ մի Արևը...

ՆԵ – Այն, որ մեծ է ու այրո՞ղ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Այո...

ՆԵ – Եվ ի՞նչ...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Այն ի՞նչ է:

ՆԵ – Իսկ երկրո՞րդը...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Չգիտեմ, այն ինձ չի հետաքրքրում: Այն բոլորինն է:

ՆԵ – Իսկ քեզ, բնականաբար, անձնական Արև է պետք:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Այո, ես համոզված եմ, որ ամեն մեկն էլ արժանի է նման ճակատագրի: Պարզապես իմ բախտը բերել է, որ իմ Արևը...

ՆԵ – Մեծ է ու այրող:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Այո: Եվ գիտե՞ս ինչն է ամենահետաքրքիրը. իմ արևը երբեք մայր չի մտնում: Այդ պատճառով իմ շուրջը միշտ լույս կա:

ՆԵ – *(Ծիծաղում է)* Դա այդպես չի կարելի թողնել: Դու պիտի դիմես...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Գիտեմ... ակնաբույժին:

ՆԵ – Ոչ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Նյարդաբանի՞ն:

ՆԵ – Ոչ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Սիրած կնո՞ջը: *(Փորձում է գրկել):*

ՆԵ – *(Տեղից բարձրանում է)* Թագավորին՝ նոր պատվերի համար: Քեզ հակացուցված է ազատությունը: Դու միշտ պիտի ծանրաբեռնված լինես աշխատանքով... տեսիլքներից ու մեծամտությունից խուսափելու համար:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դու ինձ մեղադրո՞ւմ ես:

ՆԵ – Ոչ, սա հենց այնպես... բարձրաձայն ասված մտքեր:

Դադար:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Արդարանալով)* Պարզապես ինձ մոտ այդպիսի շրջան պատահեց...

ՆԵ – Պատահե՞ց:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դե, տեղի ունեցավ:

ՆԵ – Հիմա պատահեց, թե՞ տեղի ունեցավ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Չեմ հասկանում, ի՞նչն է քեզ այդպես հուզում:

ՆԵ – Ասե՞մ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Այո:

ՆԵ – *(Շատ լուրջ, թվում է, թե պատասխանից շատ բան է կախված)* Ես ուզում եմ իմանալ... դա շատ կարևոր է... Ես քեզ պե՞տք եմ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Հիմարություն... Ես քեզ չեի զանգում միայն այն պատճառով...

ՆԵ – *(ժպտալով)* Գիտեմ: Պարզապես այդպիսի շրջան պատահեց կամ տեղի ունեցավ, որի տևողությունն է մի ամբողջ կյանք...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Համարյա անկեղծ)* Չէ, դա ժամանակավոր է:

Անկյունում երևում է Հեքիաթասացը: Նեն ասես նրան չի տեսնում:

ՀԵՔԻԱԹԱՍԱՑ – *(Ալքիմիկոսին)* ժամանակավոր է, իհարկե ժամանակավոր է: Հավերժական ոչինչ չկա, ամեն ինչ ժամանակավոր է: Բուրգերը, մարդիկ, կարծիքները... Սևը ճերմակ կդառնա, ճերմակը՝ սև, ու նորից ամեն ինչ կփոխվի... հերթական անգամ: Եվ բոլորը գիտեն այդ մասին... Բոլորը, քեզնից բացի:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Լսիր, ես մենակ չեմ:

ՀԵՔԻԱԹԱՍԱՑ – Անհեթեթություն: Դու միշտ մենակ ես:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Քեզ ի՞նչ է պետք:

ՀԵՔԻԱԹԱՍԱՑ – Եկա ասելու, որ դու հիմար ես: Ցավոք, սա միակ բանն է, որ կարող եմ ինձ թույլ տալ: Ասա ինձ, ի՞նչն է քեզ այդպես տանջում, չի թողնում քնել գիշերները: Դու ուզում ես փոխել՝ աշխարհը: Փորձում ես վիճել՝ հավերժության հետ: Ոչ: Ընդամենը ձգտում ես ոսկի ստանալ... քո միապետի համար... նրա գրպանի ծախսերի համար: Նեն իրավացի է, դու չես ապրում, դու ընդամենը ժամկետներն ես տեղափոխում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Նեն այդպիսի բան չի ասել:

ՀԵՔԻԱԹԱՍԱՑ – Որովհետև սիրում է քեզ:

Հեքիաթասացն անհետանում է:

ՆԵ – Այդ ո՞ւմ հետ էիր խոսում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ե՞ս: Ոչ, սա հենց այնպես... Ինչպես դու ասում ես՝ բարձրաձայն ասված մտքեր: Միայն թե այս անգամ շատ բարձրաձայն...

(Դադար):

Մի բան ասա: Չեմ սիրում, երբ դու այդպես լռում ես:

ՆԵ – Այդ պատճառով էլ մեզ երբեք չհաջողվեց գեղեցիկ լռել:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ինչո՞ւ ես մեր մասին խոսում անցյալ ժամանակով:

ՆԵ – *(Շփոթվելով)* Ներիր, չնկատեցի:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Սևեռուն նայում է, հետո Նեին նստեցնում աթոռին)* Ուզո՞ւմ ես քեզ անեկդոտ պատմեն:

ՆԵ – Պատմիր...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Կառափնարանում երեքն էին՝ առաջին կարապը, երկրորդ կարապը և...

ՆԵ – (*Տխուր*) Ես գիտեմ այդ անեկդոտը:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Չի կարող պատահել:

ՆԵ – Կարող է: Ես գիտեմ քո բոլոր անեկդոտները:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – (*Նստում է նրա կողքը, հատակին*) Դա վատ է: Կանայք, երբ իմանում են իմ բոլոր անեկդոտները, որպես կանոն, հեռանում են ինձանից...

ՆԵ – Եվ ի՞նչ ես անում դու:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ե՞ս: Սկսում եմ պատմել նույն անեկդոտները ուրիշ կանանց...

ՆԵ – (*Տեղից բարձրանում է*) Ավելի հեշտ չէ՞ր լինի կանանց փոխելու տեղը նոր անեկդոտ հնարել:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Իհարկե՞ ոչ:

ՆԵ – Ինչո՞ւ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Չէ՞ որ դրանք ես վերցնում եմ կյանքից:

ՆԵ – Չետո՞ ինչ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – (*Գոռում է*) Ինչպե՞ս թե հետո ինչ... Այդ դեպքում անհրաժեշտ կլիներ փոխել իմ կյանքը, դավաճանել նրան, իսկ ես չեմ ուզում:

ՆԵ – (*Գոռում է*) Ի՞նչ չես ուզում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Նրան դավաճանել: (*Մոտենում է Նեին, փորձում է գրկել*):

ՆԵ – Պետք չէ... (*Դադար*): Դու փոխվել ես:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – (*Որպես սերտած տեքստ*) Նիհարել եմ: Երևի՛ կարոտից է...

ՆԵ – (*Չուզվելով*) Առաջ դու ավելի ուժեղ էիր: Գիտեիր՝ ինչ ես ուզում, տղաներն էլ գիտեին... Դժվար էր, բայց... հեշտ: Ես հիմարություններ եմ դուրս տալիս:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Չէ, ինչո՞ւ...

ՆԵ – (*Բառերը դժվարությամբ արտասանելով*) Դու հանձնվելու իրավունք չունես... Եթե անգամ մենակ մնաս:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ցավոք, մարդը երբեք մենակ չի մնում:

ՆԵ – Ես ասացի՛ եթե անգամ...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Բարձր ձայնով)* Լավ, դու ինձ համոզեցիր:

ՆԵ – *(Գոռում է)* Ես սիրում եմ քեզ:

Երաժշտություն է հնչում:

Չետազա երկխոսությունն ասվում է շատ հուզական, այնպիսի զգացողություն պիտի առաջանա, ասես բենը պտտվում է:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դու գիտե՞ս՝ ինչու եմ կրկեսում գազանները թռչում վառվող օղակի միջով:

ՆԵ – Ոչ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Որովհետև դրանից հետո նրանց շաքար են տալիս: Հարմար է և, կարևորը, մարդասիրական:

ՆԵ – Ես քեզ չեմ հասկանում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դա կարևոր չէ: Կարևորը գուրգուրանքն է... Ասում են, գազանները շատ զգայուն են:

ՆԵ – Բացատրիր՝ ի՞նչ է կատարվում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Չեմ կարող: Ես ի վիճակի չեմ բացատրելու՝ ինչ է կատարվում: Սա ոչ թե մոլորակ է, այլ վատ օդափոխվող հանդիսասրահ: Բոլորը հավաքվել ու սպասում են: Սպասում են, երբ որևէ հիմար կցուցադրի իր հերթական մահացու տրյուկը՝ մի կտոր շաքարի համար: «Դու պիտի հաղթես»... Ինչո՞ւ ես: Ինչո՞ւ՝ պիտի և ինչո՞ւ՝ անպայման հաղթեմ... Եվ դու էլ նույնպես այդ ամենին նայում ես որպես ներկայացում: Հետաքրքիր ներկայացում՝ ցլամարտ: Այո՛, այո՛, դու պարզապես երբեք չես մտածել այդ մասին: «Դու պիտի հաղթես». վախենում ես, որ ցուլը կարող է ժամանակից շո՛ւտ սատկել: Քեզ դուր չի գալիս, որ նա կարող է շունչը փչել մորթվելուց առա՞ջ: Չի հաջողվի դիտել ներկայացումը մինչև վե՞րջ:

ՆԵ – Գի՛ժ...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ներիր... Ես իրավացի չեմ, դա մեզ չի վերաբերում: Եվ սա, և մնացած շատ բաներ... Այն, ինչ ես անում եմ, ինչով զբաղված եմ, ինչի համար ապրում եմ՝ մեզ չի վերաբերում: Սա է դժբախտությունը, որ դա մեզ չի վերաբերում:

ՆԵ – Դու ավստո՞ւմ ես:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ի՞նչ նշանակություն ունի... միևնույն է ես այլ կերպ չեմ կարող:

ՆԵ – Պատմիր քո մասին:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Զարմացած)* Ինչո՞ւ:

ՆԵ – Ես ոչինչ չգիտեմ քո մասին:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Տխուր ժպիտով)* Առաջ դու լրիվ ուրիշ բան էիր ասում:

ՆԵ – Առաջ ես իսկապես այդպես էի մտածում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Իսկ հիմա՞:

ՆԵ – Իսկ հիմա ես դադարել եմ քեզ հասկանալ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Վաղո՞ւց:

ՆԵ – Այո, Թագավորի նախորդ այցից, ավելի ճիշտ՝ ավելի վաղ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Երկար նայելով Նեին)* Եվ ի՞նչ է քեզ հետաքրքրում:

ՆԵ – Ամեն ինչ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դա ձանձրալի և ոչ ուսանելի պատմություն է:

ՆԵ – Թող ձանձրալի լինի:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Բայց քունդ կտանի:

ՆԵ – Չի տանի:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Կտանի: Նման դեպքերում կանայք ինձ միշտ ասում են.
«Ալքիմիկոս, քեզ հետ ձանձրալի է, քեզ հետ քնել կարելի է...»:
Դե ինչ, պատմե՛մ:

ՆԵ – Սպասիր մտածեմ...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Մտածեցի՞ր:

ՆԵ – Այո, ես համաձայն եմ...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դու համարձակ կին ես: *(Հանդիսավոր):* Եվ այսպես, Ալքիմիկոսի կենսագրությունը:
(Դադար: Արդեն շփոթված): Գիտե՞ս, այն չկա... Ամեն ինչ այնքան պարզունակ է ու անհեթեթ. ծնվել եմ, սովորել եմ, ընդունվել եմ, ավարտել եմ... Ինչ-որ բան արել եմ, ինչ-որ բան չեմ հասցրել անել... Արածներս հիշում եմ: Չարածներս գիտեմ: Ասենք, դա հիմա ոչ մի նշանակություն չունի: Ըստ էության, դա երբեք էլ ոչ մի նշանակություն չի ունեցել: Մեզ միայն թվում է, թե դա ինչ-որ նշանակություն ունի: Այդպես չէ՞: *(Համբուրում է):*

ՆԵ – Իսկ ի՞նչը նշանակություն ունի:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Անկեղծ)* Դու... ես... մենք, և մեզնից բացի ոչ մեկն ու ոչինչ:

ՆԵ – Այդպես մի խոսիր, թե չէ կհավատամ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Կրկին ներփակվեց)* Լավ, էլ չեմ խոսի:

ՆԵ – Ես սիրում եմ քեզ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Գիտեմ:

ՆԵ – Որտեղի՞ց:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ես ճանաչում եմ կանանց ու վստահ եմ իմ վրա:

ՆԵ – Ես կատակեցի:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ես նույնպես:

ՆԵ – Ես մնում եմ քո մոտ...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Քեզ ձանձրալի՞ է ինձ հետ:

ՆԵ – Հա, ես քնել եմ ուզում քեզ հետ:

*Լույսն աստիճանաբար մարում է: Երաժշտություն:
Ալքիմիկոսը վառում է ծխախոտը և լուցկու լույսով հասցնում ենք նկատել
Նեի մերկ ուսերը:*

ՆԵ – Լույսը վառիր:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ինչո՞ւ:

ՆԵ – Ուզում եմ քեզ տեսնել:

*Լուսավորվում է:
Նրանք նստած են հատակին:*

ՆԵ – (Ձննում է նրան, ասես առաջին անգամ է տեսնում) Ծերացել ես:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ոչ, պարզապես իմ ջախելությունը մի քիչ հնաոճ է:

ՆԵ – Քեզ դայակ է պետք:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դա՞ ինչ է:

ՆԵ – Կին, ով հոգում է:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Կարծում ես, արդեն ժամանակն է...

ՆԵ – Չգիտեմ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Եվ դու պատրաստ ես որևէ մեկին առաջարկե՞լ:

ՆԵ – (Շրջվում է, որ արցունքները չերևան) Ոչ...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ծիծաղելի է, բայց ինձ թվում է, որ դու չես կատակում...

ՆԵ – Կատակում եմ, բայց ինձ մոտ քո նման լավ չի ստացվում...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Շրջվում է Նեի կողմը)* Ինչ-որ բա՞ն էիր ուզում ինձ ասել:

ՆԵ – Չետո:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Նկատելով նրա արցունքները)* Բա՞ն է պատահել:

ՆԵ – Ոչ, թեև... չգիտեմ... Մի խոսքով, ես պիտի գնամ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Բայց դու ոնց որ թե ուզում էիր մնալ:

ՆԵ – Ոչ այդ իմաստով:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Չասկանում եմ:

ՆԵ – *(Լաց է լինում)* Ոչինչ էլ չես հասկանում: Ես քեզ սիրում եմ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Չհմարավուն ժպիտով)* Այս մասը մի քիչ անհասկանալի է, բայց կարծում եմ, որ դու ինձ կբացատրես:

ՆԵ – Այդպես է պետք:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Բարձրանում է, հագնում վերնաշապիկը)* Այ, հիմա ամեն ինչ հասկանալի դարձավ: Եվ վաղո՞ւց ես դա որոշել:

ՆԵ – Այո... չգիտեմ...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դե ինչ, եթե կսպասես, ես կվազեմ շամպայնի ետևից:

ՆԵ – Պետք չէ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Իսկ հրաժեշտի ընթրի՞քը... Դա ավանդույթ է: Եվ հետո՝ ես կենաց ունեմ: Ես ուզում եմ ցանկանալ քեզ... ձեզ... Չուսով եմ չսխալվեցի՞...

ՆԵ – Ոչ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – ...Երջանկություն:

ՆԵ – Շնորհակալ եմ:

Նա շփոթահար պտտվում է շուրջանակի, Նեն անձայն լալիս է:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Կարևորն այն է, որ նա քեզ սիրում է... Չէ, կարևորն այն է, որ դո՛ւ ես նրան սիրում:

ՆԵ – Վերջ տուր...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Ցույց է տալիս անկողինը)* Եվ շնորհակալություն շաքարի համար:

ՆԵ – Ինչո՞ւ ես այդքան դաժան:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դաժան... Այո, իսկապես, ես դրա մասին չմտածեցի էլ: Երևի պիտի մխիթարել քեզ: Թե՛ ի՞նձ... Չգիտե՞ս, նման դեպքերում ո՞ւմ են մխիթարում: Ոնց որ թե՛ ինձ: Լավ, ի՞նչ եմ մի գլուխ իմ մասին խոսում: Չասացիր՝ ո՞վ է նա...

ՆԵ – Ինչո՞ւ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Իրոք որ՝ ինչո՞ւ:

ՆԵ – *(Դանդաղ հագնվում է)* Լավ, կասեմ. նա քո ընկերն է, հիշո՞ւմ ես, Թագավորի հետ էր եկել:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Յա, ամեն ինչ ճիշտ է... Ասեմք, ես համարյա գիտեի:

ՆԵ – *(Վիրավորված)* Տեսնում եմ, դա քեզ առանձնապես չիուզեց:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դու իրավացի ես, դա ինձ չիուզեց, դա ինձ քառատեց: Սա ես կատակում եմ: Իսկ եթե լուրջ՝ դա ինձ մասնատեց: Բայց փոխարենը՝ ձեզ միավորեց: *(Նա, իհարկե, հասկանում է, որ հիմարություններ է դուրս տալիս, բայց հիմա նրա համար կարևորը՝ խուսափել Նեի հայացքից):*

ՆԵ – Քեզ իսկապե՞ս այդքան անտարբեր է:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Իհարկե՛ ոչ, պարզապես ես ընդհանրացնում եմ. եթե թագավորությունում ոչ բարդ տեղափոխությունների միջոցով ամեն երեք մարդուց կարելի է հետաքրքիր հավասարում ստանալ՝ երկուսը միասին ու մեկն առանձին, թվաբանության մեջ դա կոչվում է «համադրության օրենք», ապա այնքան էլ վատ չէ... *(Տխուր):* Թեև, եթե անկեղծ լինեմք, դա այնքան էլ լավ բան չի... *(Վերջապես նայում է Նեին):* Դու չե՞ս ուշանում:

ՆԵ – *(Ցնցվում է)* Ե՞ս...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Որքան ես հիշում եմ, դու Արևելքի կին ես... Գնա, և Աստված քեզ հետ... Չէ, ավելի լավ է մենակ գնա: Այդպես ավելի ճիշտ կլինի: Եվ չմոռանաս բարևել նրան իմ կողմից... ու կհամբուրես...

ՆԵ – Պետք չէ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Պետք է, ես գիտեմ, ինչ եմ ասում: Առաջինը չես, որին ամուսնացնում եմ:

ՆԵ – *(Անվճռակամ)* Ես գնամ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Երջանիկ եղիր:

ՆԵ – Ներիր ինձ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Հիմար-հիմար դուրս մի տուր ու չմոռանաս ասածս:

ՆԵ – Լավ: *(Հեռանում է):*

Խավար է տիրում:

**ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ**

*Հայտնվում է Հեքիաթասացը:
Հնչում է երաժշտական թեման:*

ՀԵՔԻԱԹԱՍԱՑ – *(Հուզախառով)* Օ՛, անսահման խելահեղություն: Ո՞վ է ստիպում ձեզ ամեն անգամ կրկնել նույն մետամորֆոզը անբնական ու ֆանտաստիկ միջոցներով... Վա՛յ ձեզ, որ ցանկանում եք գերազանցել բնությանն ու մետաղները դարձնել ավելի կատարյալ ձեր խելահեղ համառությանը: Աստված բնությանը տվել է անկասելի օրենքներ, իսկ դուք արհամարհում եք նրան ու չեք կարողանում նմանակել:

*Լուսավորվում է Ալքիմիկոսի լաբորատորիան:
Կենտրոնում ծնկաչոք Ալքիմիկոսն է:*

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ես սիրո՞ւմ եմ քեզ:

Միայն հիմա, երբ մենք բաժանվեցինք, ես հասկացա, որքա՛ն եմ քեզ սիրում:

Գիտեմ, որ անիմաստ խոսել դրա մասին... գիտեմ, որ հնաճ է:

Գիտեմ, որ դու ինձ նույնիսկ չես էլ լսում:

Ես սիրում եմ քեզ ու եթե մինչև հիմա չեմ ասել դրա մասին, ապա միայն այն պատճառով, որ չհասցրեցի...

Ես ընդհանրապես շատ բան չհասցրեցի: Ների՛ր...

Ես ադպես էլ չասացի «սիրելիս»,

չգրեցի քեզ նամակ:

Ես ոչ մի անգամ չսպասեցի, մինչև կհանգչի լույսը քո պատուհանում:

Քանի՛ անգամ պատրաստվում էի... և ժամադրությունից հետո

գլխակորույս չվազեցի դեպի գիշեր:

Ես չհասցրի մեղք գործել ու չհասցրի ներել:

Չմենամարտեցի քո պատճառով

և չսովորեցրի քեզ դահուկ քշել:

Ես չդիմավորեցի քեզ օդանավակայանում ու քեզ համար ծաղիկ չգողացա:

Ես չհասցրի խռովել, փախցնել քեզ աշխարհի ծայրը, ուշանալ ժամադրությունից...

Ես չհասցրեցի բացել քեզ իմ գաղտնիքը:

Դու՛ չպատմեցիր քոնը:

Ես չհասցրի հեռանալ ու չհասցրեցի վերադառնալ:

Ես նույնիսկ չհասցրեցի ասել. «Ես սիրո՞ւմ եմ քեզ»:

Հիշո՞ւմ ես անձրևը: Մեր անձրևը:

Դու ամբողջովին թրջվել էիր, ու ես վախենում էի, որ կմրսես...

Երբեմն ինձ թվում է, որ ես հիշում եմ այդ անձրևի ամեն մի կաթիլը:

Միայն հիմա, երբ մենք բաժանվեցինք, ես հասկացա ինչպե՛ս եմ քեզ... սիրում...

ՅԵՔԻԱԹԱՍԱՑ – *(Մոտենում, կանգնում է նրա թիկունքում, կարողում է)*
Եթե ծովի ջրերը սնդիկից լինեք, ես այն կվերածեի ոսկու:
Եթե... *(Թուղթը կտոր-կտոր է անում ու շաղ տալիս):*

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Առանց շրջվելու)* Այդ դո՞ւ ես, Յեքիաթասաց:

ՅԵՔԻԱԹԱՍԱՑ – Այո:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Քեզ ի՞նչ է պետք:

ՅԵՔԻԱԹԱՍԱՑ – Ինձ թվաց, որ դու ինչ-որ մեկին կանչում ես:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Բայց՝ ոչ քեզ...

ՅԵՔԻԱԹԱՍԱՑ – Դու ուրա՞խ չես ինձ տեսնել:

ԱԼՔԻՄԻԿՈՍ - Չգիտեմ, ես չեի մտածում քո մասին:

ՅԵՔԻԱԹԱՍԱՑ – Ո՞ւմ էիր ասում այդ խոսքերը:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Կարևոր չէ... Յեռացիր:

ՅԵՔԻԱԹԱՍԱՑ – Կգնամ, բայց ոչ հիմա: Ինչո՞ւ նրան չպահեցիր:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ես չգիտեմ, ինչպես եմ դա անում:

ՅԵՔԻԱԹԱՍԱՑ – Նա սպասո՞ւմ էր դրան:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դժվար թե... Ավելի շուտ՝ ոչ:

ՅԵՔԻԱԹԱՍԱՑ – *(Ուսերը թռթվելով)* Գուցե և չես սխալվում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Է՞լ ինչ է քեզ անհրաժեշտ:

ՅԵՔԻԱԹԱՍԱՑ – Դա նա՞ էր:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ո՞վ:

ՅԵՔԻԱԹԱՍԱՑ – Դե, ով անձրևի տակ թրջվե՞ց:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Դու ցինի՛կ ես:

ՅԵՔԻԱԹԱՍԱՑ – *(Պայթում է)* Իսկ գիտես, դո՞ւ ով ես: Շաղակրատի մեկը:
Լսե՞լ դրանց մասին: Դա նրանք են՝ ովքեր միայն խոսում են... սիրո
մասին... այն էլ այսպես՝ շշուկով: Ինձ ցինիկ ես անվանում ու
միաժամանակ արհամարհանքից դեմքդ ծամածռում ես: Բայց դու
ցինիկ էլ չես: Դու խլո՛ւրդ ես, ամբողջ կյանքդ բզբզում ես որջիդ մեջ,
բողբում ես կենսագրությունիցդ, աշխարհից, իսկ ինքդ թաքնվում
ես կյանքից: Ջղջում ես, որ նա հեռացավ, կամ հեռացավ մյուսը,

ամենաառաջինը, կամ ամենասիրելին... Դու տառապում ես... Ու չես տեսնում՝ որքան վատ է դա ստացվում քեզ մոտ: Ես կարող էի քեզ օգնել, բայց չեմ անի: Որովհետև ոչինչ չէր փոխվելու: Լսո՞ւմ ես, ոչինչ... Դու պարզապես չես կարող սիրել:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Տարօրինակ է...

ՋԵՔԻԱԹԱՍԱՑ – Ի՞նչը:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Տարօրինակ է, որ այս բառերը դու ես ասում, դու, որ ինքդ սիրուն չես հավատում:

ՋԵՔԻԱԹԱՍԱՑ – Այո, ես չեմ խաբում ո՛չ ինձ, ո՛չ ուրիշներին դրախտային ծիսիկներով: Ես ազնիվ եմ վարվում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Սովորեցրու, որ ես էլ...

ՋԵՔԻԱԹԱՍԱՑ – Դու չասացիր՝ նա՞ էր:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Չգիտեմ... Իսկ դու հավասարում կազմիր ու հաշվարկիր:

ՋԵՔԻԱԹԱՍԱՑ – Չեմ հասկանում, իմ մեթոդն ինչո՞վ քեզ չի բավարարում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Քո մեթո՞դը... Քո մեթոդն ինձ լրիվ բավարարում է:
(Ինչ-որ ծորակ է բացում, լաբորատորիան աստիճանաբար լցվում է ճերմակ ծխով):

ՋԵՔԻԱԹԱՍԱՑ – Գիտեմ, դու ինքդ ամբողջ կյանքդ հաշվում ես, հաշվում ես մատների վրա՝ ինչքան է մնացել... Կարծում ես, թե ապրում ես, իսկ իրականում միայն գոյատևում ես: Անգամ զգացմունքներդ ես տնտեսում:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ի՞նչ ես ուզում ինձնից:

ՋԵՔԻԱԹԱՍԱՑ – Ես եկա, որովհետև դու ինձ կանչեցիր:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ո՛չ...

ՋԵՔԻԱԹԱՍԱՑ – Ես չէի կարող սխալվել:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – *(Այս պահից խոսում է առանց որևէ հուզումի)* Ասա ինձ, ի՞նչ է սերը:

ՋԵՔԻԱԹԱՍԱՑ – Սերը ծիածան է՝ բազմագույն ու բազմերանգ...

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ուզում ես ասել՝ սերը պատրա՞նք է:

ՋԵՔԻԱԹԱՍԱՑ – Հա, մասսայական տեսախաբություն:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Կարելի՞ է ներել դավաճանությունը:

ՋԵՔԻԱԹԱՍԱՑ – Օրենքները, սահմանները և նմանատիպ

պայմանականություններն ընդամենը խաղալիք են մարդկության համար, որոնք զվարճանքի փոխարեն մեզ տառապանք են հասցնում, լավագույն դեպքում՝ գլխացավանք: Բայց դա քեզ չի վերաբերում. դու թույլ մարդ ես:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Թո՞ւյլ...

ՉԵՔԻԱԹԱՍԱՑ – Այո:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Ասա, ես երջանիկ կլինե՞մ:

ՉԵՔԻԱԹԱՍԱՑ – Երջանկությունը ապուշների բախտաբաժինն է: Այդ վիճակում նույնիսկ կարճատև գտնվելու դեպքում պահանջվում է անհապաղ բժշկական միջամտություն:
Դու ինձ հարցեր ես տալիս, որոնց արդեն պատասխանել եմ:
Ասենք, ամեն ինչ ճիշտ է. «Վիշապը կուլ է տալիս սեփական պոչը»:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Վերջին հարցը. ես ոսկի կստանա՞մ:

ՉԵՔԻԱԹԱՍԱՑ – Ոչ... Չիմա հաստատ՝ ոչ:

ԱԼՔԻՄԻԿՈՍ – Միևնույն է, ես ոչնչի համար չեմ զղջում:

ՉԵՔԻԱԹԱՍԱՑ – Գիտե՞ս ինչ, երբ դու արդեն երեսունն անց ես ու երեկ նորից ծննդյանդ օրն էր,
երբ Թագավորը սկսել է քեզ դիմել «դու»-ով,
իսկ դու դեռևս «երիտասարդ մասնագետ» ես,
երբ ընդունելության ես գնում համակուրսեցուդ մոտ
կամ ընդհակառակը՝ վերադառնում համադասարանցուդ
աշխատասենյակից,
երբ հարսնացուդ հեռախոսով ասում է քեզ, որ այսօր ժամանակ
չունի...
ուրեմն ինչ-որ տեղ, ինչ-որ ժամանակ, ինչ-որ բանում երևի դու սխալ
էիր, Ալքիմիկո՛ս:

Այս մենախոսության ընթացքում Ալքիմիկոսը դանդաղ գնում է բեմի խորքն ու աստիճանաբար լուծվում ճերմակ մշուշի մեջ:

ՎԵՐՋ